



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>


Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՒ
(ԱՆԳԼԿՈՄ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
103



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

103

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2014

**Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը**

Կազմող և առաջաբանի հեղինակ՝ պատմական գիտությունների
թեկնածու Ս. Ռ. Ավետիսյան

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ Կ. Հ. Խաչատրյան

Ա 791 Անգլիական օգնության կոմիտեի (Անգլկոմ) գործունեությունը
Հայաստանում 1920-ական թվականներին (Փաստաթղթերի և
նյութերի ժողովածու) / Կազմող Ս. Ռ. Ավետիսյան. - Եր.:
Պատմ. ինստիտուտ. 2014. - 137 էջ:

Հրատարակվող փաստաթղթերն ու նյութերը լուսաբանում են
1920-ական թվականներին Հայաստանում Անգլիական օգնության
կոմիտեի իրականացրած մարդասիրական և որբախնամ գործունե-
ությունը, կոմիտեի և խորհրդային իշխանությունների հարաբերու-
թյունները նաև Ամերկոմի և Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության
հետ համագործակցությունն ու փոխհարաբերությունները: Փաստա-
թղթերի գերակշիռ մասը հրատարակվում է առաջին անգամ:

Ժողովածուն հասցեագրված է պատմաբանների, միջազգայնա-
գետների, քաղաքագետների և ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(22)

ISBN 978-99941-73-93-8

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2014

20-րդ դարի առաջին տասնամյակներին՝ Հայաստանի համար սո-
ցիալ-տնտեսական չափազանց ծանր շրջանում, անգնահատելի է այն
օգնությունը, որ ցուցաբերվեց հայ ժողովրդին արտասահմանյան մար-
դասիրական կազմակերպությունների կողմից: Այդ գործում իրենց զգալի
ներդրումն ունեն բրիտանական կազմակերպությունները:

Անգլիայում ձևավորված սկզբունքի համաձայն, երբ աշխարհի որևէ
մասում տեղի էր ունենում դժբախտություն, Լոնդոնում կազմավորվում էին
բազմաթիվ կոմիտեներ՝ տուժածներին օգնություն ցույց տալու նպատա-
կով: Ընդ որում, կոմիտեները ղեկավարվում էին տվյալ ժամանակահատ-
վածում պաշտոնավարող Լորդ Մերի՝ Լոնդոնի քաղաքագլխի կողմից¹:

Այսպես, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ
Բրիտանիայում ծավալվեց հուժկու շարժում՝ պատերազմի և թորքական
կոտորածների հետևանքով տուժած բազմահազար հայ փախստական-
ներին օգնելու նպատակով: Ստեղծվեցին մի շարք կազմակերպություն-
ներ, որոնք իրենց առջև նմանատիպ նպատակներ էին դրել²:

Հայոց Մեծ Եղեռնի տարիներին կազմվում է «Անգլիան հայ փախս-
տականներին» լոնդոնյան կոմիտեն՝ Անգլկոմը, որը պատմական գրա-
կանության և արխիվային փաստաթղթերում հաճախ անվանվում է նաև
Լորդ Մերի ֆոնդ³ («Lord Mayor's Fund»), չնայած վերջինից բացի ընդգր-
կում էր նաև անգլիական մի քանի այլ հայասիրական և հասարակական
ու բարեգործական կազմակերպություններ:

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 38, գ. 10, ք. 25–26:

² Տե՛ս Պողոսյան Բ., Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914–1923 թթ.),
Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, 2005, էջ 77:

³ Լորդ Մերի ֆոնդ³ (Լորդ քաղաքագլխի ֆոնդ) կամ Հայ փախստականների ֆոնդ.
20-րդ դարի առաջին կեսի բրիտանական ամենախոշոր նպաստամատույց կազմա-
կերպությունն էր: Ստեղծման մասին որոշումն ընդունվել է Լորդերի պալատի
կողմից 1915 թ. հոկտեմբերի 6-ին: Կազմակերպության ստեղծման գործում մեծ
ներդրում ունեին Լոնդոնի Լորդ քաղաքագլուխ Չարլզ Ջոնսոնը, ապագա Լորդ
քաղաքագլուխ Կառլ Ուեյլֆիլդը, հայասնպաստ գործի քատագով մի շարք պառլա-
մենտականներ:

Անգլկոմի կազմում էին Էմիլիա Ռոբինզոնի հիմնած «Հայկական ընկերությունը» («Armenian Society»), Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդը («Lord Mayor's Fund»), «Մանչեստրի կանանց ընկերությունը» և այլն⁴:

Հայ փախստականների ֆոնդը կամ Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդը («Lord Mayor's Fund») հիմնադրվել է 1915 թ. հոկտեմբերի 6-ին Լորդերի պալատի կողմից ֆոնդի ստեղծման մասին ընդունված որոշումով⁵:

«Հայկական ընկերությունը» հիմնադրվել էր հայտնի «Daily News» թերթի խմբագիր Ջոն Ռոբինզոնի դստեր՝ հայանպաստ գործի մեծ ջատագով Էմիլիա Ռոբինզոնի կողմից, ով դեռևս Առաջին համաշխարհայինից առաջ սկսել էր հետաքրքրվել Օսմանյան կայսրությունում հայերի ծանր կացությամբ:

«Մանչեստրի կանանց ընկերությունը» փոքրիկ անգլիական հայասիրական միավոր էր, որը ևս ինտեգրված էր Անգլկոմիին:

Անգլկոմի կազմում էր մասնաճյուղերի քարտեզների ընկերությունը («Friend of Armenia»), որը ստեղծվել էր դեռևս հայերի առաջին մեծ կոտորածներից հետո՝ 1896 թ., և Հայաստանում հիմնել էր որբանոցներ ու աղջիկների կարի արհեստանոցներ⁶:

Անգլկոմի հիմնական նպատակն էր կոտորածներից փրկվածներին օգնության տրամադրումը: 1916 թվականից սկսած՝ Անգլիական կոմիտեի բաժանմունքները գործում էին Եգիպտոսում, Բասրայում, Ադանայում, Վանում և Իզդիրում⁷:

Սակայն ստեղծված պատերազմական իրավիճակի ու քաղաքական անկայունության հետևանքով Կոմիտեն հաճախ ստիպված էր լինում արդեն իսկ հիմնադրված և գործող որբանոցները տեղափոխել ավելի ապահով վայրեր:

Այսպես, քուրդ ու տաճիկ ավազակախմբերի կողմից Իզդիրի՝ առաջին գրավումից առաջ, տեղի բավականին լավ պայմաններ ունեցող Անգլկոմի որբանոցը հարկադրաբար փոխադրվեց Երևան: Միջազեռքի

⁴ Տե՛ս Տերոյան Վ., Իմպերիալիստական ժիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., 2008, էջ 10:

⁵ Տե՛ս Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 86:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 10, ք. 25-26:

⁷ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Եր., 1975, էջ 101:

կառավարության ստեղծումից հետո Բասրայի որբանոցները ևս անցան կոմիտեի հոգածության ներքո. գործունեությունը սահմանափակվեց երեխաներին հագուստ հայթայթելով: Ադանայից անգլիական գորբերի դուրս բերումից հետո տեղի որբերը մախ փոխադրվեցին Կիպրոս, ապա Կ. Պոլիս: 1921 թ. տվյալներով Կ. Պոլսում Անգլկոմի որբանոցներում ապաստանում էին մոտ հազար որբեր⁸:

Յավոք, Կ. Պոլսում և Ֆոնդի միջոցներով գործող որբանոցի գործունեությունը կարճ տևեց: Ի վերջո որոշում ընդունվեց հայ երեխաներին տեղափոխել Կորֆու կղզի: Սակայն Կորֆուն ևս հայ որբերի համար ապաստան չդարձավ: Արդեն 1923 թ. հիսուն երեխաներ ֆոնդի կողմից ուղարկվեցին Կանադա՝ «The Armeninan Relief Fund of Canada»-ի աջակցությամբ: Հետագա իրադարձությունները ստիպեցին ֆոնդին արդեն 1925 թ. փակել Կորֆուում գործող որբանոցը և բոլոր որբերին տեղափոխել Կանադա⁹:

Այդուհանդերձ՝ արխիվային փաստաթղթերը վկայում են, որ մինչ Կորֆուի որբանոցի փակվելը, որբերի մի մասն էլ՝ ավելի քան 300 հոգի, ՀՄԽՀ կառավարության համաձայնությամբ տեղափոխվել են Երևան:

1924 թ. Անգլկոմի տնօրեն Նորթքոթսին հասցեագրված ՀՄԽՀ ժողկոմխորհի ներկայացուցչի նամակում մասնավորապես նշվում է. «ՀՄԽՀ կառավարությունը չի առարկում Կորֆուից 311 երեխա տղա և աղջիկ Հայաստան տեղափոխելուն, պայմանով, որ նրանց գոյությունը ապահովեք մինչև 16-17 տարեկան հասնելը»¹⁰:

Սույն ժողովածուում ընդգրկված Անգլկոմի գործունեությանը վերաբերող բազմաթիվ արխիվային փաստաթղթեր վերաբերում են վերջինիս գործունեությանը 1920-ական թվականներին: Այն արժեքավոր տեղեկատվություն է պարունակում ինչպես կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների, այնպես էլ այլ արտասահմանյան բարեգործական կազմակերպությունների ու խորհրդային իշխանությունների հետ ունեցած հարաբերությունների մասին՝ լուսաբանելով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը զուգահեռ ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում որբերի խնամքի ու փախս-

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 10, ք. 25-26:

⁹ Տե՛ս Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 149-150:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 45, ք. 93:

տականների օժանդակության բարդ գործի կազմակերպման առանցքային կողմերը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Անգլիոյն գործունեությունը Հայաստանում ժամանակավորապես ընդհատվում է:

1920 թ. նոյեմբերի սկզբներին, երբ քննական գործերը գրավում են Ալեքսանդրապոլը, և Երևանի ու Թիֆլիսի միջև ընդհատվում է երկաթուղային երթևեկությունը, Երևանից Թիֆլիս է հեռանում նաև Անգլիոյն Հայաստանի ներկայացուցիչ Հարքորտը՝ իր տնօրինած որբանոցն ու հիվանդանոցը թողնելով Ամերկոյն Երևանի լիազոր, բժիշկ Աչերի հոգածությանը: 1921 թ. ամռանը Հարքորտը կրկին վերադառնում է Երևան արդեն ոչ միայն որպես Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդի, այլև հայանպաստ մի քանի ուրիշ բարեգործական հաստատությունների ներկայացուցիչ: 1921 թ. օգոստոսի 19-ին ՀՄԽՀ արտաքին գործերի ժողկոմ Ասքանազ Մոավյանը սկզբունքային համաձայնություն է հայտնում Անգլիոյն գործունեությունը Խորհրդային Հայաստանում վերսկսելու վերաբերյալ¹¹:

Անգլիոյն գործունեության ամենաեռուն շրջանը եղել է 1922 թ., որից հետո այն աստիճանաբար նվազել է, իսկ 1926 թ. կեսերին վերջնականապես դադարեցվել է¹²:

Ի տարբերություն Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոյն)՝ Անգլիոյն ծավալած մարդասիրական գործունեությունը ավելի քիչ է լուսաբանված, մինչդեռ այս կազմակերպության շնորհիվ հարյուրավոր հայ որբեր կարողացան փրկվել սովից և ցրտից՝ ապաստանելով Կոմիտեի որբանոցներում:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև Ամերկոյնի համեմատությամբ հայ որբերին ցուցաբերած Անգլիոյն օգնության ծավալները շատ ավելի փոքր են, այդուամենայնիվ արդեն 1923 թ. դեկտեմբերին Անգլիոյն իր խնամակալության տակ ուներ 4 որբանոց (նույն քվականի մայիսին որբանոցների քիվն ընդամենը 2-ն էր՝ 160 սաներով¹³), որտեղ բնակվում էր 483 երեխա՝ 243 տղա և 240 աղջիկ¹⁴: Կոմիտեի հովանավորության տակ էին գտնվում նաև մեկ հիվան-

¹⁰ Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 101:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 102:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 30, ք. 104-105:

¹³ Տե՛ս նույն տեղում, գ. 32, ք. 14-16:

դանոց, մի քանի արհեստագործական դպրոցներ և մեկ հանրակրթական դպրոց՝ 513 աշակերտներով¹⁵, որտեղ որբերի հետ համատեղ ուսանում էին նաև կոմիտեի աշխատակիցների երեխաները:

Անգլիոյն գործունեությունն իրականացնում էր Անգլիայից անմիջականորեն ստացվող նվիրատվությունների գումարների հաշվին, սակայն անհրաժեշտ պարենային ապրանքները ձեռք էր բերում մեծամասամբ Անդրդաշնության տարածքում, ինչը զգալի օժանդակություն էր սոցիալապես վատթարագույն վիճակում գտնվող երկրի տնտեսությանը, քանզի տեղական ապրանքների ձեռքբերումը խթանում էր երկրի արտադրության կայացմանը:

Կոմիտեի գործունեությունը չէր սահմանափակվում միայն թուրքական ջարդերից փրկված որբերի խնամակալությամբ. կազմակերպությունն օգնություն էր ցույց տալիս նաև Միջագետքի հայ փախստականներին, ինչպես նաև Հայաստան ներգաղթածներին:

Ընդ որում, այս նպատակի համար միջոցներ էին տրամադրվում նաև բրիտանական պետական գանձարանից: Մասնավորապես, Իրաքում գտնվող հայ փախստականներին օգնելու և վերջիններին Անդրկովկաս տեղափոխելու համար բրիտանական կառավարության կողմից տրամադրվել է 35000, այնուհետև հավելյալ ևս 10000 ֆունտ ստեռլինգ¹⁶:

Կոմիտեի կարի, կոշիկի և գործվածքեղենի արտելներում մեծահասակ որբերի հետ միասին աշխատում էին նաև գաղթականները: Ասվածից բխում է, որ Կոմիտեն, բացի բարեգործական անհատույց օգնության տրամադրումից, լուծում էր նաև բնակչության մի որոշակի, թեկուզ և չնչին մասի աշխատատեղերով ապահովման խնդիրը, ինչը ևս տնտեսական առումով դրական ազդեցություն ուներ երկրի սոցիալական վիճակի բարելավման վրա:

Արխիվային փաստաթղթերում տեղ գտած տվյալների հիման վրա հնարավորություն ենք ստանում ուսումնասիրել Անգլիոյն ծավալած գործունեության մի շարք առանցքային կողմեր, որի արդյունքում կարելի է վերլուծություն կատարել Հայաստանի համար անչափ ծանր շրջանում

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Տե՛ս Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 150:

գաղթականության ու որբերին առնչվող խնդիրների լուծման գործում այս կազմակերպության ունեցած ներդրման մասին:

Հատկանշական է, որ Անգլկոմը չէր սահմանափակվում միայն երեխաների խնամքը որբանոցներում կազմակերպելով, և նրա գործունեությունը ներառում էր ավելի լայն ոլորտ. մասնավորապես կոմիտեի միջոցներով գործում էին սպաստարաններ, սննդակայաններ, արհեստանոցներ և դպրոցներ, որոնցից օգտվում էին ոչ միայն որբանոցներում ապաստանած երեխաները:

Սակայն գործունեության այս եռուն շրջանը սահմանափակվեց միայն 1922 թվականով, երբ ամենամեծ չափով արտահայտվեց Անգլկոմի բարեգործական ներուժը:

Միայն 1922 թ. ընթացքում Անգլկոմի կողմից Հայաստան է ներմուծվել 65 վագոն տարբեր ապրանքներ¹⁷: Նույն թվականին ֆոնդի հավաքած ընդհանուր գումարը կազմել է 30000 ֆունտ ստեռլինգ, որի զգալի մասը ուղարկվել է Երևան¹⁸:

Այն մասին, որ 1922 թ. Անգլկոմը դեռևս ի վիճակի էր լրացուցիչ բարեգործական միջոցներ ներդնել որբերի խնամակալության համար, վկայում է նաև ՀՄԽՀ լուսժողովմատի խնդրանքին ի պատասխան՝ Անգլկոմի համաձայնությունը՝ 1922 թ. բացել ևս մեկ մանկատուն, ինչպես նաև տրամադրել որբերի ծնեռային հագուստի համար մահուդ, հագուստ և պարեն:

ՀՄԽՀ ժողովմատիին ներկայացրած լուսժողովմատի զեկուցագրում մասնավորապես նշվում է. «Խորը գիտակցելով, որ աշնան վերջերից ծանր կացության մեջ պետք է ընկնեին փողոցներում զիշերուցրեկ քափառող հարյուրավոր անտուն-անտեր երեխաները, միաժամանակ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մեր նախահաշվի սահմաններում բնավ չէինք կարող նույնիսկ մինիմալ չափով հոգալ այդ թշվառների կարիքները, դիմում են Ամերիկյան եւ Անգլիական կոմիտեներին և խնդրում նրանց աջակցությունը: Ամերկոմը բացարձակապես մերժում է՝ հայտնելով, որ իր միջոցները թույլ չեն տալիս իրեն նոր մանկատներ բանալ. Անգլիական կոմիտեն խոստանում է իր աջակցությու-

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 147:


¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 151:

նր: Հոկտեմբերի վերջերին Անգլիական կոմիտեի լիագոր Նորթբորտը խոստանում է 2000 յարդ մահուդ մեր մանկատների երեխաների ծնեռային հագուստի համար և 250 հոգու պարեն ու հագուստ, եթե Երևանում հիմնելու են նոր մանկատուն հատկապես փողոցի երեխաների համար¹⁹»:

1922 թ. դեկտեմբերին Անգլկոմը փորձում է ավելի ընդլայնել գործունեության շրջանակները՝ հիմնելով նոր սննդակայաններ, որոնցից օգտվում էին ընդհանուր թվով 2700 երեխաներ: Անգլկոմն օգնություն էր ցուցաբերում նաև Միջագետքի և Իրանի գաղթականներից թվով 6900 մարդկանց²⁰ այդպիսով փրկելով սովի և թշվառության ճիրաններից (տե՛ս գծապատկեր 1):

ԳՇԱՊԱՏԿԵՐ 1

Անգլկոմի սննդակայաններում սնվող երեխաների բաշխվածությունն ըստ բնակավայրերի²¹



Հատկանշական է, որ 1922 թ. դրությամբ ունենալով երկու մանկատուն, որոնք գտնվում էին Երևանում, Անգլկոմը սննդակայանների առումով փորձել է ընդգրկել ավելի լայն աշխարհագրություն՝ ներառելով ևս վեց բնակավայրեր, որտեղ կենտրոնացած էին մեծաթիվ սովյալ որբեր:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 102, քք. 4-5:


²⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 38, գ. 30, քք. 98-105:

²¹ Գծապատկերը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 30, քք. 98-105 փաստաթղթերի տվյալների:

Սակայն, ուսումնասիրելով արդեն 1923 թ. դեկտեմբերի դրությամբ արտասահմանյան օգնության կազմակերպություններում խորհրդային ներկայացուցչության հաշվետվությունը, պարզվում է, որ սննդակայանների թիվը կրճատվել է, և 1923 թ. հունվարից մինչև հուլիս ընկած հատվածում Անգլիոնը պահել է միայն մեկ սննդակայան էջմիածնում, որտեղ օրական սնունդ են ստացել 300 երեխաներ²²: Փաստորեն, Անգլիոնի հիմնած սննդակայանները համապատասխան միջոցների բացակայության պատճառով գոյատևել են կարճ ժամանակահատված: Այդուհանդերձ, փաստերը խոսում են այն մասին, որ Անգլիոնն իր գործունեությունը չի սահմանափակել միայն Երևանում, այլ որբերի քանակի համեմատությամբ առկա սուղ միջոցների պայմաններում անգամ ձգտել է իր գործունեությունն իրականացնել ամբողջ Հայաստանի տարածքով՝ խնդիր ունենալով փրկել հնարավորինս մեծ թվով որբերի:

Չնայած 1923 թ. հունվար-օգոստոս ամիսներին գործունեության ընդհանուր ծավալների կրճատմանը, այդուհանդերձ, Անգլիոնին հաջողվել է որբանոցների թիվը հասցնել երկուսից չորսի, որտեղ գտնվում էին ընդհանուր թվով 505 որբեր (տե՛ս գծապատկեր 2):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 32, թթ. 14-16.


²³ Գծապատկերը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 30, թթ. 98-105, գ. 32, թթ. 14-16., գ. 33, թթ. 88-89, գ. 42. թթ. 9-17, գ. 62, թթ. 76-83, գ. 62, թթ. 18-19 փաստաթղթերի տվյալների:

Ութ ամիսների ընթացքում Անգլիոնի որբանոցների երեխաների թիվը ավելացել է ավելի քան երեք անգամ՝ 160-ից հասնելով 505-ի, որը ամենաբարձր ցուցանիշն է կոմիտեի գործունեության ընթացքում:

Համեմատաբար ավելի մեծ թվով որբեր ապաստանում էին Երևանում՝ Անգլիոնի երրորդ որբանոցում, որը շենքային բարենպաստ պայմաններից ելնելով՝ տեղակայված էր Ս. Սարգիս եկեղեցու նախկին թեմական դպրոցի շենքում, ինչը թույլ էր տալիս ավելի շատ երեխաներ ընդունել: Այստեղ տեղավորված էին 200 որբեր, այդ թվում՝ 123 աղջիկ և 77 տղա: Առաջին որբանոցում ապաստանում էին 19 տղա և 88 աղջիկ, չորրորդում՝ համապատասխանաբար 75 և 40: Երկրորդ որբանոցի սաները բացառապես տղաներ էին՝ թվով 83 հոգի (տե՛ս գծապատկեր 3):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

1923 թ. օգոստոսի դրությամբ Անգլիոնի հոգածության տակ գտնվող որբերի բաշխվածությունն ըստ մանկատների²⁴



Այսպիսով, չնայած սննդակայանների, գաղթականությանն օժանդակության և գործունեության այլ ոլորտների մասով գործունեության զգալի կրճատմանը՝ որբանոցների առումով Անգլիոնը 1923 թ. ընդհայնեց գործունեության շրջանակները՝ իր հիմնական գործառույթը կենտրոնացնելով որբերի խնամքը մանկատներում իրականացնելու վրա: Այդ մասին է վկայում նաև ժամանակի հասարակական-քաղաքական գործիչ, մտավորական և Ամերիկոնում տարբեր պաշտոններ զբաղեց-

²⁴ Գծապատկերը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, թթ. 88-89 փաստաթղթերի տվյալների:

րած Վարազդատ Տերոյանի գրառումն Անգլկոմի մասին: Նա նշում է. «Որբանոցը նրանց (Անգլկոմի – Ս. Ա.) կենտրոնական և միակ հիմնարկն էր, որի վրա և ծախսվում էր նրանց ոչ միայն նյութական, այլև բարոյական բոլոր կապիտալները: Արդարացի դատելու համար պետք է խոստովանել, որ իսկապես Անգլկոմի որբանոցն ըստ ամենայնի լավ կազմակերպված, կահավորված և կարգավորված մի որբանոց էր, որը ոչ միայն նմանություն չուներ Ամերկոմի անկարգ և անկազմակերպ խառնարանների հետ, որոնց, լավագույն դեպքում, գիշերային ապաստարան կամ հանրակացարան կարելի էր անվանել»²⁵:

Այն, որ Տերոյանը նշում է Անգլկոմի միայն մեկ որբանոցի մասին, վկայում է այն մասին, որ, հավանաբար, նրա գրառումը վերաբերում է Անգլկոմի գործունեության 1921–1922 թթ.: Օգնության մյուս ուղղությունները Տերոյանի ուշադրությանը չեն արժանացել Ամերկոմի համեմատությամբ դրանց ծավալների անհամեմատ փոքր լինելու պատճառով:

Այդուհանդերձ, կարևոր ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ Անգլկոմի որբանոցների խնամքի տակ գտնվող երեխաների վիճակը շահեկանորեն տարբերվում էր Ամերկոմի որբանոցներում ապաստանածների կարգավիճակից՝ տիրող սքնությունի և կարգուկանոնի առումով:

Հաջորդող ժամանակահատվածում, ինչպես երևում է գծապատկեր 2-ի տվյալներից, Անգլկոմի որբանոցների երեխաների ընդհանուր թիվը շարունակաբար նվազել է՝ 1925 թ. հունվարի դրությամբ հասնելով 289-ի:

1924 թ. հունվարին որբերի թվաքանակը կրճատելու վերաբերյալ Անգլկոմի Լոնդոնի քարտուղարությունից ստացված նամակում նշվում է, որ «...Կոմիտեն ծրագրած է հիմնապես պահել 200 երեխաներ իբրև որբեր, այս էլ աստիճանաբար պիտի տրվի ձեր կառավարությանը, երբ արդեն երկրի դրությունը բարվորված է: ...Անցյալ մարտին մր. Հարքորտը և ես մասնավոր դիմում կատարեցինք Կոմիտեին, որ այս ապաստարանի երեխաները մի ժամանակ ևս պետք է պաշտպանվեն, և թե այդ ժամանակ մենք ենթադրեցինք դադարեցնել ընդհանուր օգնությունը, մեր Կոմիտեն համաձայնվեց անել այդ մի տարվա համար ևս: Ահա տարին լրանում է եկող մարտին, բայց Կոմիտեն նորից ժամանակը երկարացրեց մինչև հունիսը: Ուստի Կոմիտեն եկող հունիսի վերջը

²⁵ Տե՛ս Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 89:

պիտի փափագի, որ Դուք ստանձնեք ավելորդ երեխաների հիմնական թվի՝ 200-ի 25%-ը կրճատված, որը մենք կամենում ենք պահել: Այս նշանակում է կրճատել մեր թիվը 480-ից 150-ի...»²⁶:


Արդեն 1925 թ. հուլիսից Անգլկոմի և ՀՄԽՀ լուսժողովմատի միջև բանակցություններ են սկսվում 2 որբանոցները հանձնելու վերաբերյալ: Համաձայն պայմանավորվածության՝ Անգլկոմը հանձնելու էր մանկատների ամբողջ գույքը, պահեստում եղած պարենը, 129 սանի համար հագուստ ու անկողին և յուրաքանչյուր սանի համար՝ 15 ֆունտ ստեռլինգ-ընդամենը՝ 1935: Գումարը պետք է հանձնվեր Լուսժողովմատին երկու փուլով²⁷:

Այսպիսով, արդեն 1925 թ. հուլիսին Անգլկոմի խնամակալության տակ գտնվող որբերի քանակը կրճատվելով հասել էր մինչև 129-ի, իսկ հաջորդ տարվա հունվարի 1-ից նախատեսվում էր ընդհանրապես դադարեցնել Անգլկոմի որբախնամ գործունեությունը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Անգլկոմի որբերի սեռատարիքային կազմի ուսումնասիրությունը այն առումով, որ կարևոր տեղեկատվություն է պարունակում երեխաների կրթության և դաստիարակության վերաբերյալ (տե՛ս գծապատկեր 4):

ԳՏԱՊԱՏԿԵՐ 4

Անգլկոմի որբերի սեռատարիքային կազմը (1924 թ. դեկտեմբերի դրությամբ)²⁸



²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 45, թթ. 20–23:

²⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 340, թ. 103:

²⁸ Գծապատկերը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 62, թթ. 76–83 փաստաթղթերի տվյալների:

Քանի որ ըստ սեռատարիքային խմբերի որբերի քանակի մասին վիճակագրական տվյալների հանդիպում ենք 1924 թ. դեկտեմբերին քվագրված արխիվային փաստաթղթերում, իսկ 1923 թ., ինչպես նաև 1924 թ. առաջին կիսամյակին (երբ Անգլկոմի որբանոցներում արձանագրվել է որբերի ամենամեծ թիվը) վերաբերող տվյալներն արտացոլում են որբերի միայն սեռային կազմը, հետևաբար որպես ուսումնասիրության հիմք վերցրել ենք 1924 թ. դեկտեմբերի տվյալները:

Հարկ ենք համարում նշել նաև, որ այս տվյալները Անդրժողովոմխորհի և ՀՍԽՀ ժողովոմխորհի ներկայացուցչին են ներկայացվել ՀՍԽՀ ժողովոմխորհի գաղտնի բաժնի կողմից Անգլկոմին ուղղված հարցման պատասխանի տեսքով²⁹, ինչը ևս վկայում է տվյալների հույժ կարևորության մասին:

Գծայատկեր 4-ից երևում է, որ Անգլկոմի որբանոցներում են ապաստանել 5-18 տարեկան որբեր, ընդ որում՝ որբերի ընդհանուր կազմի մեջ մեծ թիվ են կազմում 10-14 տարեկան, այսինքն՝ վաղ պատանեկության շրջանում գտնվող երեխաները: Ամենամեծ թիվը կազմում են 13 և 14 տարեկան տարիքային խմբերում գտնվող երեխաները, համապատասխանաբար՝ 57 և 70, այն դեպքում, երբ 5-9 տարեկան երեխաների ընդհանուր թիվը ընդամենը 25 է:

Այսպիսով, կարող ենք ասել, որ որբերի թվում միանշանակ գերակշռում էին դպրոցահասակ երեխաները, ինչը խոսում է այն մասին, որ Անգլկոմի առջև էր ծառայած ոչ միայն որբերի գուտ կենսական պայմանների ապահովումը, այլև կրթության և դաստիարակության, այլ կերպ ասած՝ ապագա քաղաքացիների ձևավորման հիմնախնդիրը:

Այս հարցում, անշուշտ, որպես ակնհայտ շահառու կողմ հանդես էին գալիս խորհրդային իշխանությունները, որոնք բարիոլոգիական հարաբերություններ էին պահպանում Անգլկոմի հետ, սակայն միաժամանակ ձգտում վերահսկողության տակ պահել վերջինիս գործունեությունը, մասնավորապես՝ որբերի կրթության կազմակերպման հարցում:

Այս առումով կարևորություն է ներկայացնում Անգլկոմի և խորհրդային իշխանությունների միջև հարաբերությունների տարբեր ասպեկտներն արտացոլող արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Այսպես, 1921 թ. ՀՍԽՀ արտգործժողովոմի կողմից հաստատված փաստաթղթում ամրագրվում են այն բոլոր արտոնությունները, որոնցով իշխանություններն օժտում են Անգլիական օգնության կոմիտեին՝ միաժամանակ հավաստելով, որ ՀՍԽՀ իշխանությունները պատրաստական են ցուցաբերել Անգլկոմին և նրա գործունեությանը ցանկացած օժանդակություն³⁰:

Որ կետից բաղկացած փաստաթղթում, որոնցից յոթում բացառապես ամրագրվում են Անգլկոմին տրվող արտոնությունները, այդ թվում՝ կոմիտեի անձնակազմի՝ երկրից անարգել էլումուտի հնարավորությունը, օգնության բաշխման և վերահսկման ինքնուրույնությունը, մաքսային ու այլ վճարումներից նազատումը և այլն, ութերորդ կետով սահմանվում էր կոմիտեի որբանոցներում առկա որբերի կրթության և դաստիարակության կազմակերպման իրավական հենքը:

Ըստ այդմ, որբերի կրթությունը և դաստիարակությունը կոմիտեի որբանոցներում պետք է իրականացվեր ՀՍԽՀ Լուսժողովոմի անմիջական ղեկավարությամբ՝ համաձայն ՀՍԽՀ օրենսդրության³¹:

Սա, իհարկե, վկայում է այն մասին, որ խորհրդային իշխանությունները մեծապես մտահոգված էին ապագա քաղաքացիների կրթադաստիարակչական գործընթացը խորհրդային գաղափարախոսությանը համահունչ կազմակերպելու հարցում, ինչը կարող էր վտանգվել արևմտյան արժեքների կրողը հանդիսացող միսիոներների դաստիարակության ներքո:

Պատահական չէր, որ օտարերկրյա բարեգործական կազմակերպություններին կից դպրոցներում խորհրդային կառավարության ակտիվ միջամտությամբ վերացվեցին աստվածաբանության և խորհրդային դպրոցի ոգուն խորթ այլ առարկաների դասավանդումը, ապա ցրվեցին բոյ-սկաուտական կազմակերպությունները³²:

Իհարկե, Անգլկոմի դեպքում այս խնդիրը նվազ մտահոգիչ էր քան Ամերկոմի պարագայում, երբ խորհրդային իշխանությունները ստիպված եղան ավելի կոշտ միջոցների դիմել՝ առանձին համաձայնագրով խստորեն սահմանափակելով Ամերկոմի գործունեությունը միայն օգ-

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 62, քք. 76-83:

³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 22, թ. 181:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 105:

նության տրամադրմամբ՝ կտրականապես բացառելով ցանկացած քաղաքական, առևտրական և կրոնական քարոզչության գործունեություն³³։ Դա առաջին հերթին պայմանավորված էր Անգլկոմի գործունեության ավելի փոքր ծավալներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ Անգլկոմի աշխատակիցների մեծամասնությունը տեղացիներ էին։ 1923 թ. տվյալով Անգլկոմի աշխատակազմում օտարերկրացի էր միայն տնօրենը, մնացած 77 աշխատակիցները տեղացիներ էին³⁴։

Անգլկոմի կողմից աշխատակիցների ընդունման, ազատման, աշխատաժամների սահմանման, վարձատրման և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ գործընթացները ևս սահմանվում էին երկկողմ համաձայնագրով³⁵։

Ինչ վերաբերում էր որբերի կրթությանը, ապա բոլոր երկկողմ համաձայնագրերով իշխանություններն ամրագրում էին իրենց վերահսկողական գործառույթը։

Անդրկովկասի խորհրդային կառավարության և Լորդ Մերի Ֆոնդի միջև կնքված 1924 թ. սեպտեմբերին քվազրվող համաձայնագրով քեև պահպանվում են նախապես ընձեռված արտոնությունները, սակայն էապես ընդլայնվում է կառավարության վերահսկողության իրավասությունը։ Մասնավորապես նշվում է, որ Լորդ Մերի Ֆոնդը պատասխանատու է պահելու երեխաներին մինչև նրանց 16 տարեկան դառնալը, և երեխաները որբանոցից պետք է արձակվեն միայն կառավարության համաձայնությամբ։

Նույն համաձայնագրի երրորդ կետով սահմանվում է, որ երեխաները պետք է կրթություն ստանան Լուսավորության ժողովուհատի դպրոցներում։ Ժողովուհատի այն դպրոցները, որտեղ պետք է սովորեին միայն Լորդ Մերի Ֆոնդի երեխաները, պահվելու էր Ֆոնդի հաշվին³⁶։

Համաձայնագրի իններորդ և տասներորդ կետերով ամրագրվում է, որ Ֆոնդը իրավունք չունի առանց կառավարության քույրություն վաճառելու կամ փոխանակելու որբերի համար ներմուծված որևէ ապրանք,

իսկ Ֆոնդի որբանոցների և շենքերի վերահսկողությունը պետք է կատարվի Կառավարության հատուկ ներկայացուցչի միջոցով³⁷։

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ խորհրդային կառավարությունն Անգլկոմի գործունեությանը վերաբերվում էր արդեն որոշակի վերապահումներով, ինչն էլ հիմնական պատճառն էր նոր համաձայնագրի կնքման և Անգլկոմի որոշ գործառույթների նկատմամբ վերահսկողության խստացման։

Գ. Նորատունկյանին ուղղված ՀՍԽՀ հողագործության ժողովրդական կոմիսար Ա. Երզնկյանի գրության մեջ, որը ներառում է նույն համաձայնագրի վերաբերյալ պարզաբանումներ, նշվում է, որ համաձայնագրի երկրորդ հոդվածում նշվող որբերի արձակման տարիքը (16 տարեկան), սահմանվել է որպես ինքնապահ դառնալու տարիքային շեմ։ Իսկ նույն հոդվածի երկրորդ մասը, որը վերաբերում էր որբերի արձակմանը միայն կառավարության համաձայնությամբ, ամրագրվել է՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ կառավարությունը նախապես պետք է տեղեկացվի որբերի արձակման մասին՝ նախքան այդ նրանց որևէ արհեստ կամ հողագործություն սովորեցնելու նպատակով³⁸։

Կրթությունը Լուսավորության կոմիսարիատի դպրոցներում իրականացնելու մասին համաձայնագրի երրորդ կետի վերաբերյալ ժողովրդական կոմիսարը հստակեցնում է, որ որքան էլ Լորդ Մերի Ֆոնդի տրամադրության տակ գտնվող դպրոցների մատակարարումը և ղեկավարումն իրականացվում է նույն Ֆոնդի կողմից, այդուամենայնիվ, այդտեղ պարտադիր է կրթական գործընթացը կազմակերպել պետական դպրոցների ծրագրով³⁹։

Վերը նշվածը ևս մեկ անգամ փաստում է կրթության հարցում խորհրդային կառավարության ունեցած դիրքորոշման մասին։

Մույն հետազոտության շրջանակներում մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Անգլկոմի հարաբերությունները մարդասիրական այլ կազմակերպությունների, մասնավորապես՝ Ամերկոմի և Հայաստանի Կարմիր Խաչ ընկերության հետ։

³³ Տե՛ս Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Եր., 2009, էջ 166։

³⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 32, ք. 14-16։

³⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 62, ք. 54։

³⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 51-52։

³⁷ Տե՛ս նույն տեղում։

³⁸ Տե՛ս նույն տեղում գ. 72, ք. 18-19։

³⁹ Տե՛ս նույն տեղում։

Ամերկոմի համեմատությամբ Անգլկոմի գործունեության ավելի մեղ շրջանակները պայմանավորում էին մաս ազդեցության ավելի ցածր մակարդակ⁴⁰: Պատկերավոր համեմատության համար նշենք, որ միայն 1922 թ. ապրիլից մինչև տարեվերջ Հայաստանում Ամերկոմից օգնություն ստացողների թիվը կազմել է ամսական 103825 մարդ, իսկ 1924 թ. Ամերկոմի որբանոցներում միայն չափահաս որբերի թիվը կազմում էր 8275, երբ պետական որբանոցներում այդ թիվը հասնում էր ընդամենը 816-ի⁴¹: Գծապատկեր 4-ի տվյալներից երևում է, որ 1924 թ. դեկտեմբերի դրությամբ Անգլկոմի որբանոցների չափահաս որբերի թիվը ընդամենը 4-ն է:

Այնհայտ է, որ չափահասների խնամակալությունն իր բնույթով ավելի ծախսատար է, հետևաբար այս տեսանկյունից համեմատությունն անգամ բավարար է ընդգծելու համար երկու կոմիտեների կողմից ծախսվող միջոցների հսկայական տարբերությունը և դրանով պայմանավորված՝ իշխանությունների հետ հարաբերություններում Ամերկոմի ունեցած ավելի մեծ ինքնուրույնությունն ու ազդեցությունը, ինչը թույլ էր տալիս վերջինիս, Վ. Տերոյանի բնորոշմամբ, հաճախ անտեսել ու արհամարհանքով վերաբերվել Անգլկոմին⁴²:

Սակայն, միաժամանակ, հանդիսանալով Հայաստանում երկու գերտերությունների ոչ ֆորմալ ներկայացուցիչներ, երկու կազմակերպությունները, ձգտում էին գտնել առերևույթ պահպանել սերտ հարաբերություններ՝ երբեմն հանդես գալով մաս համագործակցության որոշ մասնաձեռնություններով:

Նման դրսևորումներից էր Անգլիական և Ամերիկյան կոմիտեների սկաուտական խմբերի միացյալ մարզահանդեսի անցկացումը, որին հրավիրված էին ՀՄԽՀ լուսժողկոմի բարձրաստիճան պաշտոնյաներ⁴³, ինչպես մաս՝ Ամերկոմի ներկայացուցիչ կողմից տրված հրամանը, որով թյուրադրվում է առանց անցագրային կարգի Անգլկոմի ներկայացուցիչների մուտքը Ամերկոմի հիվանդանոցներ և որբանոցներ⁴⁴: Սա ևս վկա-

յում է երկու կոմիտեների շահագրգռվածության մասին հրապարակայնորեն ընդգծելու իրենց մտերմական հարաբերությունների առկայությունը:

Սակայն, ինչպես վկայում են այդ կազմակերպությունների աշխատանքի ու կառուցվածքի մասին ակամատես ու անմիջական մասնակից Վ. Տերոյանի տեղեկությունները, երկու կոմիտեների միջև հարաբերությունները չէր կարելի միաբժեքորեն ընկալել: Նրա բնորոշմամբ. «Այդ հարաբերության բնորոշ գիծը մի քիչ հակասական է. մեկ կողմից՝ սերտ և մտերմական, մյուս կողմից՝ քննադատական, մրցակցային և նույնիսկ՝ դավադրական-բշնամական: ... Հենց որ խնդիրը գալիս էր այն մասին, թե այս երկիրը մտել է վերահաս զաղութացման ժամանակաշրջանը, հենց որ պետք էր լինում հաշվի առնել շատ մոտալուտ ապագայի հեռանկարները, Անգլկոմը մասնավաճ, իբրև ավելի թույլ և փոքր կազմակերպություն, անկարող էր պատշաճ կերպով քաջցնել իր քննադատական և հակադիր վերաբերմունքը դեպի Ամերկոմը»⁴⁵:

Այս առումով, որպես ընդհանրացում, կարող ենք նշել, որ Ամերկոմի և Անգլկոմի հարաբերությունները, որքան էլ որ առերևույթ կարող էին հարթ թվալ, այդուամենայնիվ, ունեցել են մասնական կնճռուտ կողմեր, ինչը որոշակիորեն պայմանավորված էր մաս այն տերությունների աշխարհաքաղաքական շահերով, որոնց ներկայացուցիչն էին տվյալ կազմակերպությունները:

Ամերկոմի համեմատությամբ՝ ավելի ջերմ էին Անգլկոմի հարաբերությունները Հայաստանի Կարմիր Խաչ ընկերության հետ, ինչն արտահայտվում էր մաս համագործակցության տեսքով: Մասնավորապես, տիկին Ռոբինսոնի ընկերության կողմից Հայաստանի Կարմիր Խաչին պարբերաբար տրամադրվում էր դեղորայք՝ փախստականներին և որբերին բժշկական օգնություն տրամադրելու նպատակով:

Բացի այդ, հնարավորության սահմաններում Անգլկոմի կողմից Հայաստանի Կարմիր Խաչ ընկերությանն է տրամադրվել հաշմանդամների համար անհրաժեշտ բժշկական սարքավորումներ և այլ հավելյալ պարագաներ⁴⁶:

⁴⁰ Տե՛ս Ավետիսյան Ս., ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հայանպաստ գործունեությունը Առաջին աշխարհամարտից հետո, Բանբեր Երևանի Համալսարանի, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2012, 137.6, էջ 3-12:

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

⁴² Տե՛ս Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 90:

⁴³ Տե՛ս ՀԱԱ ֆ. 122, ց. 1, գ. 399, ք. 10:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 38, գ. 22, ք. 365:

⁴⁵ Տե՛ս Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 90:

⁴⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 12, ք. 6:

Այս երկու կազմակերպությունների միջև ձևավորված առանձնահատուկ ջերմ հարաբերությունների մասին է վկայում մահ Հայաստանի Կարմիր խաչ ընկերության վարչության որոշումը Անգլոմի ներկայացուցիչ Հարթորտին ընկերության վարչության անդամ ընտրելու մասին՝ հաշվի առնելով ընկերությանը նրա մատուցած ծառայությունները և ցուցաբերած օժանդակությունը⁴⁷:

Ընդհանրացնելով վերը նշված փաստերը՝ կարող ենք եզրահանգել, որ Անգլիական օգնության կոմիտեն, գործելով Հայաստանում որպես մարդասիրական նպաստամատույց կազմակերպություն, իր զգալի ներդրումն է ունեցել ինչպես հարյուրավոր որբերի ու գաղթականների փրկության, այնպես էլ երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հնարավորինս բարելավման գործում: Կարծում ենք՝ սույն հավաքածուում տեղ գտած Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերը կօգնեն լուսաբանելու 1920-ական թվականներին Անգլոմի՝ Հայաստանում ծավալված գործունեությունը՝ հնարավորություն տալով ավելի մանրամասն ծանոթանալու այդ գործունեության առանցքային ուղղություններին:

Ժողովածուում ընդգրկված որոշ փաստաթղթերը տպագրվում են մասնակի կրճատումներով և ոճական շտկումներով, դրանցում կատարվել են ուղղագրական և կետադրական սխալների ուղղումներ:

Սուրեն Ավետիսյան

THE ACTIVITY OF ENGLISH COMMITTEE FOR RELIEF IN ARMENIA IN 1920's

SUMMARY

In the first decades of 20-h century, in the very hard social-economic period for Armenia, the aid was inestimable, given to Armenian people by foreign humanitarian organizations. To that cause the British organizations made a major contribution.

According to the principle formed in Great Britain, when in some part of the World has been happened a misfortune, in London have been formed many committees for injured persons' relief.

So, in the years of the World War I, in Great Britain begun a grandiose movement to help thousands Armenian refugees, that were victims of the war and Turkish bloody battles. A number of organizations were set up, which had such purposes.

In the years of Armenian Genocide was set up "England for Armenian Refugees" London Committee; English Committee, which is often mentioned in historical literature and archival documents as "Lord Mayor's Fund", in spite of the fact, that it has included some more non-government charitable organizations.

In the Committee were included "The Armenian Society", founded by Emilia Robinson, "Lord Mayor's Fund" and "Society of Manchester women".

Fund of Armenian Refugees or Lord Mayor's Fund was founded in October 6, 1915, by the House of Lords.

The Armenian Society has been founded by the daughter of John Robinson, the editor of the well-known newspaper "Daily News", Emilia Robinson, who was been interested in the hard state of Armenians in the Ottoman Empire, still before World War.

"Society of Manchester women" was a little relief organization, integrated in English Committee.

The English Committee was included the organization "Friends of Armenia", which still after the first big slaughters in 1896 was founded, and founded orphanages and girls' sewing workshops in Armenia.

⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 154, ց. 1, գ. 12, ք. 7:

The main goal of English Committee was the relief of slaughters' victims. Starting from 1916, act the departments of English Committee in Egypt, Basra, Adana, Van and Igridir.

But, because of the war situation and political instability, the Committee was forced to move the orphans to the more safe places.

So, before the first occupation of Igridir by the Kurd and Tajik robbers the Committee was forced to move his orphanage, having enough good conditions, to Yerevan. After the forming of Mesopotamia Government, the Basra's orphanage was also included into the English Committee. After moving of English forces from Adana, the local orphanages were moved to Cyprus and then to Constantinople. According to data of 1921, in Constantinople orphanages of English Committee have taken shelter about thousand orphans.

Unfortunately in Constantinople was the activity of the orphanage, acting within Committee means, very short. There was decided to move Armenian children to the island Corfu. But Corfu didn't become as a refuge for Armenian children again. In 1923 fifty children have been sent to Canada with assistance of "The Armenian Relief Fund of Canada". Subsequently in 1925 the Corfu orphanage was closed and all of the children were sent to Canada.

At the same time, the archive documents indicate, that before closing of the Corfu orphanage, one part of the children, more 300 persons, were moved to Yerevan, by consent of the Government of ASSR.

In the letter of the representative of Council of Peoples Commissars of ASSR addressed to the director of English Committee Northcourt, there is noticed: "The Government of ASSR is not mind moving 311 children, boys and girls, from Corfu to Armenia, on condition, that you must provide for them till theirs being 16-17".

Numerous archival documents, which are included in this collection, concern English Committee's activity in the 1920-es. The Collection of documents contains valuable information both about the main areas of Committee's activity and about its relations with the foreign charitable organizations and Soviet authority. The archival documents throw light upon the main directions of organizing the relief's very hard work, which has

simultaneously taken place in the difficult political situation, when the Soviet system was being established.

After the establishing of Soviet system English Committee's activity was temporarily interrupted.

In November 1920, when the Kemal forces have seized Alexandrapole, and the railway communication between Yerevan and Tbilisi has been interrupted, the representative of English Committee D. S. Harcourt has been departed from Yerevan to Tbilisi, leaving Committee's orphanage and hospital under the doctor Usher's care, who was American Committee's representative in Yerevan.

In summer, 1921, Harcourt returned Yerevan as Lord Mayor's Fund's and some other charitable organization's representative. In august 19, 1921, people Commissar of foreign relations A. Mravyan gave his agreement for resuming English Committee's activity in Armenia.

The most active period of English Committee's activity was 1922, after which it was gradually decreased, and in 1926 was finally stopped.

In comparison with American Committee, the activity of English Committee is less examined, whereas owing to the work of this organization hundreds of children were saved from famine and cold, taking shelter in the committee's orphanages.

The Examination of archival documents shows, that the scale of English Committee's activity was smaller, in comparison with American Committee, but nevertheless in December 1923 the Committee already had 4 orphanages (in may there were only 2 orphanages, with 160 inmates), whereat 483 children have stayed, 243 boys and 240 girls.

There were still 1 hospital, some vocational schools and one school with 513 pupils, where the orphans and the children of committee workers went.

The English Committee got the money directly from the Great Britain, but the necessary food items it has bought in most cases in the territory of Trans-Caucasian Federation. It was an essential help for the country's economy, which was in a worse situation, while buying the local goods has stimulated the country's industry.

The Committee's activity wasn't limited to the orphans care. The Committee helped Armenian refugees in Mesopotamia and also the migrants in Armenia.

For the Goals of Committee the means have also been giving by the government Treasury of Great Britain. So, for the relief of Armenian refugees in Iraq and for theirs moving to Armenia the British government has given 35000, and later on more 10000 pounds.

At the sewing workshops of the Committee with the grown-up orphans the refugees have also worked. Proceeding from that fact, we can say, that besides its charitable work, the Committee has solved some people's Employment problem, by this way making a positive influence on the country's economy too.

Basing on the archival document's data we take an opportunity to examine a number of ways of English Committee's activity and the major contribution of this organization in that hard period.

It is important to mark, that the Committee wasn't limited only to taking care of the orphans, and its activity has included more spheres. In particular some refuges, feeding points, workshops and schools have acted within committee's means, which have been used not only by committee's orphans.

But this active period of activity ended in 1922. In that year the committee's charitable potential was displayed most strongly.

Only during 1922 65 carriages of different wares have been imported to Armenia. In the same year sum of money raised by Committee was totaled 30000 pound, he great part of which has been sent to Yerevan.

In response to the request made by the Commissariat of Public Education of ASSR, the English Committee has given his consent to open one more orphanage and also to give clothes, food and cloth for children's wintry clothes. This fact show, that the Committee was able to invest additional means for orphans in 1922.

In the report of the Commissariat of Public Education submitted for approval of Council of Peoples Commissars of Armenian SSR there is marked the following: "Realizing, that many homeless children must be in very hard situation in the end of autumn, and having in mind that fact, that within the limits of our budget we can't satisfy even their minimal needs, I

addressed the American and English Committees to get their assistance. The American Committee refuses, informing, that they didn't have enough means to open new orphanages. The English Committee gave his consent. The representative of Committee Northcourt promised to give 2000 yard cloth for children's wintry clothes and food and clothes for 250 persons in the end of October, if they found a new orphanage in Yerevan, especially for street children".

In December 1922 the English Committee have tried to extend the spheres of his activity, founding new feeding points, which have served for 2700 children. The Committee has also supported 6900 refugees from Mesopotamia and Persia, saving them from abject poverty.

But examining the 1923 December's report of soviet representative in foreign relief organizations, we find out, that the count of feeding points had been increased, and during the period from January to July 1923 the English Committee had only one feeding point in Echmiadzin, where 300 children had eaten daily. This means, that Committee's feeding points have worked a short time, because of the shortage of means.

Nevertheless, the facts show, that Committee hasn't limited his activity only in Yerevan. It has aspired to act in whole territory of country, saving more orphans as possible.

In spite of the activity's decreasing, nevertheless the English Committee could bring up the number of orphanages to four, where totaled 505 orphanages have lived.

So, in spite of decreasing the activity in the spheres of refugee's supporting, feeding points and others, about orphanages we can say that the Committee increased its activity, making to take care of the orphans as his main function.

The notes of Varazdat Teroyan, which was a public and political figure and had different positions in the American Committee, indicate of aforementioned. He notes: "The orphanage was theirs (English Committee's - S. A.) central and only institution, which all theirs material and moral capital has been spent on. To be true, it must be confessed, that English Committee's orphanage was really organized, arranged and ordered one. It didn't have any

likeness with unorganized orphanages of the American Committee, which could be called at the best case a night refuge or a hostel".

Consequently the conditions of English Committee's orphans have positively differed from the conditions of American Committee's orphans, considering the atmosphere, which was there.

The data of January 1925 indicate, that the number of English Committee's orphans were decreased, reaching to 289.

In the letter, gotten from the Committee's London secretariat, the following is noticed about the decreasing of orphans number: "The Committee plans to take care of 200 orphans, but they also will gradually be given to your government, when the situation in the country is improved. In the last march Mr. Harcourt and I have addressed Committee's requests to refuge the children some more time, and the Committee agreed to do it one more year. The year will pass in next march, and the Committee will be glad, if you take care of the great part of children. It means, that the number of our orphans will be decreased from 480 to 150..."

Starting from July the negotiations for turning over the two Committee's orphanages between the English Committee and the People's Commissariat of Public Education have begun.

In accordance with the agreement, the English Committee had to turn over all orphanages' property, food, which there was in warehouses, clothes and beds for 129 pupils, and 15 pounds for every pupil, totaled 1935 pounds. The sum of money had to be turned over to the People's Commissariat of Public Education in two stages. I - in 25, July 1925 - 967½ pounds, II - 1. January 1926.

So, in July 1925 the number of Committee's orphans has decreased to 129, and from 1 January of the next year, there were provided for stopping the Committee's activity.

Based on the information, which we find in archival documents dated December 1924, we can definitely say, that among the orphans there lots of children of school age, which indicates, that the Committee have solved not only the problem of orphans' supporting, but also the problems connected with their education and upbringing, in other words it was concerned with the problems of formation of future citizens.

In this business have been interested the Soviet authorities, which were on friendly terms with the Committee, but in the same time they have tried to control the Committee's activity, especially concerned with education.

Concerning with aforementioned, it's important to examine the archival documents applied to different aspects of the relations between the Committee and the Soviet authorities.

So, in the document, certified by the Peoples Commissariat of Foreign Relations, all the privileges, which was given to the Committee by the Soviet authorities, were ascertained, attesting, that the Authorities of ASSR have been on the point of supporting the Committee in their every business.

In the document, composed from eight points, the seven points were about the privileges given to the English Committee, including the Committee's staff's possibility to freely go in and out to the country, the independence of relief's distribution and control, customs preferences and etc., but the eight point exclusively established the law basis of orphans education and upbringing.

According to that, the education and upbringing of the orphans in the Committee's orphanages had to be realized under the control of the People's Commissariat of Public Education of Armenian SSR, according to the legislation of ASSR.

Of course, the aforementioned shows that the Soviet authorities were concerned with the question of organizing of education of future citizens in accordance with the soviet ideology, which could be run the danger of the missionaries' education giving, which were the bearers of western values.

By the agreement concluded between the Soviet government and Lord Mayor's Fund in September 1924, the privileges have remained in force, but the government's competence of control have been increased. There has been observed in the document, that the Lord Mayor's Fund was responsible for taking care of children till theirs being 16 years old, and the children could be set free only with government's consent.

The third point of the agreement established that the children had to be educated at the schools of the Public Education Commissariat. The schools of Commissariat, where had to be educated only the children of Lord Mayor's Fund, had to be kept within Fund's means.

The ninth and tenth points of agreement have respectively established, that the Fund hadn't the right to sell or to exchange any article imported for the children without government's permission. And the control over the Fund's buildings and orphanages had to be realized by the government's special representative.

So, we can conclude, that the Soviet government already considered the Committee's activity with reservation, which was the main cause of concluding of the new agreement, which has kept a closer watch over the Committee's activity.

через Представительство. Таким образом урегулировано взаимоотношение Американского Комитета с Советскими органами власти, что дает возможность Представительству быть в курсе дел Американского Комитета и ликвидировать все недоразумения и конфликты, возникающие Американским Комитетом и органами власти, профорганизациями и общественными организациями.

Учет местного и иностранного персонала

До организации Представительства прием и увольнение рабочих и служащих Америкомом производились единолично, благодаря чему последним был подобран самый отсталый элемент для своей работы, в данный же момент по предложению Представительства анкетированы все 4500 служащих Америкома, по инструкциям Представительства, согласованных с Закчека, и ведется строгий учет в изменениях и движении, как местного, так и иностранного персонала.

Проведения декретов и постановлений Высших краевых властей

Представительство следит за проведением в жизнь Америкомом декретов и постановлений Высших краев властей, относящихся к работе Америкома и следит за действиями Америкома, в отношении коммерческих операций и политической деятельности. Америкому предложено провести все свои торговые операции через государственные и экономические органы и с ведома Представительства, по поводу чего сейчас ведутся переговоры и уже частично проведено в жизнь вышеизложенное предложение (в Джелал-Оглинском районе все торговые операции уже ведутся через кооперации и госторг).

О распределении продуктов помощи, совместно с Представительством

До учреждения Представительства продукты, предназначенные голодающему населению Закавказья, распределялись Америкомом единолично. После же назначения Представителя таковое совершается совместно, и продукты раздаются через местные исполкомы и уполномоченных, причем помощь взрослому населению оказывается при условии,

если труд этого населения удастся направить на восстановление сельского хозяйства или различных реконструктивных назначений, как ремонт дорог, зданий и т.п.

О распределении продуктов помощи совместно с Представительством

Количество выданных продуктов Америкомом и число лиц, получивших общую помощь за время с апреля месяца по 31-е декабря 1922 года.

Армения

Рис	24.974 пуд
Гриц	140.055 пуд
Лови	21.857 пуд
Хлеб	6.418 пуд
Молоко	1.402 пуд
Какао	7 пуд
Мука	649 пуд
Мясо	42 пуд
Соль	803 пуд
Овощи	469 пуд
Сахар	4 пуд
Масло	84 пуд
Другие продукты	412 пуд
Число душ ежемесячно получавших помощь	103825

Единовременно отпущено

Грузия	69.852 пуд. грица
Число душ получавших помощь	232.840
Азербайджан	30.370 пуд. грица
Число душ получавших помощь	101.233
Дагестан	3.276 пуд. грица
Число душ получавших помощь	10.920
Зангезур	40.000 пуд. грица
Число душ получавших помощь	81.500

По поручению АРА Америкомом передано через Представительство Союзному Совету 5.000 тонн ржи, для голодающего населения Закавказских Республик.

Отпущено Америкомом для посевкампании, (собранные им среди Армянской колонии в Америке), в распоряжение Наркомзема Армении 50.000 долларов, также через Представительство.

О распределении продуктов помощи совместно с Представительством
Количество выданных продуктов Америкомом и число лиц, получивших общую помощь за время с 1-го января по 25-е мая 1923 г.

Закреспублики

Гриц	5033 пуд.
Хлеб	227 пуд.
Мука	156 пуд.
Репа	167 пуд.
Буракс	109 пуд.
Соль	24 пуд.
Рис	3 пуд.
Молоко	253 коровок
Старая обувь	250 пар
Старая одежда	1 кнп и 2346 штук.

Армения

Для ремонта шоссе и дорог	15.000 пуд. грица
Для нужд голодающего населения	20.000 пуд.
Медикаменты	1896 дол. 20 цент.
Наркопросу Армении для детского праздника, по предложению ЦИК-а Армении	1000 дол.
Комитету Помощи Армении по договорному соглашению, для закупки сельско-хозяйственных орудий и раздачи трудящемуся неимущему крестьянству	5000 дол.
Армении в кредит	

Грузия

Отпущено медикаментов для больницы в Гори на 455 дол. 77 цент.
Для больницы в Тифлисе на 839 дол. 81 цент.

Азербайджан

Отпущено медикаментов для больницы в Баку на 456 дол. 89 цент.

Дагестан

Отпущено старой одежды 52 тока.

Закавказской железной дороге

Отпущено по предложению Представительства рабочим железной дороги на ст. Алекполь, способствующим тушению пожара складов

Америкома в Алекполе 200 пуд. грица.

Отпущено для помощи инвалидам войны 500 пуд. грица.

О заграничной почте

Представительство совместно с Закчека регулярно следит за заграничной почтой Американского Комитета и без осмотра и опечатания заграничной почты и багажа, ничего не пропускается.

Учет продовольственных грузов и расходование железнодорожного кредита

До организации Представительства невозможно было установить количество прибывающих из за-границы грузов помощи и нельзя было следить за правильным израсходованием железнодорожного кредита, спускаемого Америкому Закавказской железной дорогой. В настоящее время установлен учет всех грузов прибывающих из за-границы в адрес заграничных организаций, для дела помощи. Представительство требует от заграничных организаций представления подробной отчетности о расходовании железнодорожного кредита по форме, выработанной Представительством, с ведома РКИ.

Порядок оказания помощи

Через Представительство проводятся в жизнь все требования Закавказского Совнаркома, а также требования Совнаркомов Республики и отдельных Наркоматов, в смысле оказания помощи населению, восстановления сельского хозяйства, приема детей в приюты и прочее.

О злоупотреблениях в Америкоме

Установлено наблюдение через уполномоченных Представительства и соответствующих органов власти за злоупотреблениями служащих уголовного характера.

Об отводе

Представительство отводит членов Америкома, неудовлетворяющих требованиям своего прямого назначения, согласно декрету Союзного Совета и соглашению от 10 февраля с/г.

О льготах иностранному персоналу

Представительством предоставляется иностранному персоналу на основании соглашения оещанные им льготы, в смысле передвижения, получения заграничных пропусков, опечатания персонального багажа и освобождения их от всяких налогов и сборов.

О связи

Держит самую регулярную и живую связь с Совнаркомом Закавказья через Управление делами, информируя в каждом отдельном случае Совнаркому о недоразумениях и конфликтах, носящих принципиальный характер.

Цифровые данные по канцелярии Представительства

Ниже приводятся цифровые данные о течении различных бумаг и дел в Представительстве с 1-го января по 25-ое мая с/г.

Число входящих бумаг - 933, исходящих - 927.

Распечатано и осмотрено прибывающей из заграницы почты - 14.

Осмотрено, опечатано и отправлено за границу почты и багажа - 85. Анкетировано служащих, как местного, так и иностранного персонала и внесено в книгу - 4317.

Получено пропусков на выезд за границу - 48.

Ежедневно устраивается совещание с Генеральным директором для разрешения различных вопросов, возникающих вокруг тарифного соглашения, помощи, воспитания и пр.

Представители Профсоюзов Грузии и Армении, Местком, Конфликтные комиссии и т.д., все свои заседания по различным вопросам, относящиеся к деятельности Америккома, устраивают в Представительстве под председательством Представителя Заксовнаркома.

Получено на содержание Представительства Заксовнаркома (канцелярия и штаты) с 1-го января по сей день - 1.143.527.000 рублей. Отпущено Америкому для перевозки грузов помощи с 1-го января по сей день - 10.000 рублей золотом.

Утверждены Заксовнаркомом расходы по Америкому на коммунальные и почтово-телеграфные расходы (четыре миллиарда четыреста шестьдесят три миллиона семьсот пятьдесят тысяч (4.468.750.000) рублей (закладензнаками).

Ассигновано Заксовнаркомом для перевозки продовольственных грузов и для различных перевозок по Закавказской жел. дороге за второй квартал 80.000.000.000 рублей (закладензнаками).

Деятельность Америккома

Постоянная помощь

Деятельность Американского Комитета Помощи на Ближнем Востоке в Закавказье по районам.

Число детей по районам:

Алекполь, Казачий пост	4534
Алекполь, Город	2945
Алекполь, Полигон	5004
Алекполь, Северские казармы	2940

Эривань	3655
Джелал-Оглы	2438
Батум	155
Тифлис, закрытые приюты	317
Тифлис, дневные приюты	5374
Всего	27362

Возраст детей и их пол в закрытых приютах

Возраст	Мальчиков	Девочек	Овсего пола
От 0-4	52	273	325
От 4-8	234	609	893
От 9-12	142	1360	2702
От 12-14	4052	4889	10048
От 14-16	1671	3052	4723
От 16-17	1649	1903	3552
Всего	9.700	12.286	21.986

Количество закрытых приютов по районам

Алекполь, Казачий пост	18
Алекполь, Город	7
Алекполь, Полигон	11
Алекполь, Северские казармы	4
Эривань	12
Джелал-Оглы	12
Тифлис	4
Батум	1
Итого	69

Состояние приютов и детей

Приюты в общем находятся в хорошем состоянии, как в Армении, так и в Грузии. Санитарные и гигиенические условия вполне удовлетворительные. Дети одеты удовлетворительно, питание достаточное. В настоящее время получают питание 1725 каллорий и больше. Некоторая часть детей, имеющих мать и отца размещены по домам. Им выдается на дом в неделю: 4 фунта крупы, 1/2 фунт рису, 1 фунт лоби, масло 1/5

фунта, картофеля 1/2 фунта, лука 1/2 фунта, мыло 1 фунт, соли 1/4 фунта, мед 1/2 фунта, орешек 2 фунта. Им также выдается по мере надобности комплекты одежды, состоящие из пальто, ватинок, белья, носок и фуражки.

Медицинская помощь

Оказывается в среднем в месяц:

Постельные больные	2900
Амбулаторные больные	70.000
Зубоврачебное лечение	1900

Имеется 8 больниц. Делаются операции и оказывается всякого рода медицинская помощь нуждающемуся населению.

Заболеваемость в приютах - 10%. Процент смертности 0,01%. Преобладающие болезни - чесотка, трахома, порша, что первоначально сильно распространились среди детей, но в настоящее время значительно уменьшились.

Сельско-хозяйственная помощь

В пользование Америкоса представлено в Армении 2000 десятин земли, не считая бывшего государственного имения Каракала в Лорийском уезде, площадью 5298 десят. Америкосом производятся опыты улучшения семян и озимого посева. Работы производятся трактором. Устраиваются новые фермы для коров, закупаются племенные лошади и коровы. В Каракалах Америкосом произведен ремонт 17-ти зданий, в число отремонтированных зданий входит 14 конюшен, один молочный завод, один склад и жилое помещение.

Конюшен отремонтировано на 400 голов рогатого скота, 36 лошадей и 500 овец. Завод оборудован пока примитивно, но за это время сделать больше нельзя было. В настоящее время заводом выделяется масло и чанах-сыр. На ферме имеется 500 голов крупного скота: 500 овец, 12 мул, 78 телят и 3 бугая (метисов).

Электрификация

Америкосом установлены две электрические станции: одна в Алекполе, в районе казарм и одна электрическая станция мощностью в 24 лошадиных сил в Джелал-Оглах, дающая около 700 лампочек. Станция в Джелал-Оглах эксплуатируется Исполкомом и частью Америкосом, причем Исполком возмещает Америкосу расходы по содержанию станций приблизительно в сумме 150 рублей золотом в месяц. Ведутся переговоры по устройству новой электростанции в Джелал-Оглах мощностью в 40 лошадиных сил.

Число помещений, занимаемых Америкосом в Закавказье - 307.

Число местных служащих по районам

Алекполь, Казачий пост	1049
Алекполь, городское отделение	227
Алекполь, Полигон	495
Алекполь, Северские казармы	354
Джелал-Оглы	300
Эривань	700
Баку	6
Тифлис	350
Итого	3517

Число персонала Америкоса - 55

О наблюдениях Представительства по Америкосу

В работе Американского Комитета замечается следующее:

1) Существуют две тенденции: 1 - это сторонники продолжения работы в Закавказье, в контакте с советской властью и 2 - сторонники прекращения работы Американского Комитета и переброски таковой в Персию, Турцию и Грецию.

2) С 1-го января с/г замечается сокращение работы Американского Комитета. Помощь взрослому населению резко сокращена. Новые сироты в приюты не принимаются.

3) Замечается усиленный отъезд иностранного персонала Америкоса на родину. По данным, в сентябре 1922 года в Закавказье ино-

Мастерские

- а) швейная мастерская, работают 60 швей, которые шьют зимние костюмы для правительственных детдомов.
- в) рукодельная мастерская, работают 24 девочки. Работы отправлены в Англию.
- в) ткацкая мастерская, 9 станков. Работают 23 женщины.
- г) сапожная мастерская. Работают 10 мастеров; шьют обувь для призреваемых Комитетом детей.
- д) Сады. В распоряжении Миссии 2 сада. Ведутся опытные работы, урожай весь используется для приютов и убежищ.

Общая помощь

Оказывалась помощь беженцам из Мессопатами и из Персии в количестве 6900 человек. Было куплено для них в прошлом году 180 быков, выдано каждому по 1/2 пуд. пшеницы и по 2 пуда ячменя или проса на семена. Оказывается также единовременная помощь правительственным детдомам, консультации по делам малолетних при Наркомюсте и прочее.

Никаких конфликтов вокруг законов о труде с профсоюзами не было.

С 1-го января по сей день отпущено Британской Миссии на перевозку грузов 10.000 рублей золотом.

Заканчивая доклад и имея ввиду важность работы заграничных организаций помощи в Закавказье, я хотел бы обратить Ваше внимание на массу противоречий и разногласий, которые встречает Представительство с органами Власти во время практического разрешения того или иного вопроса, относящегося к деятельности заграничных организаций помощи в Закавказье.

Потому прошу Вашего циркулярного распоряжения всем государственным органам ЗОСР исполнить просьбы представительства в области урегулирования работы заграничных организаций на основании соглашения от 10-го февраля с/г.

Также обратить Ваше внимание на то, что ввиду ликвидации работы АРА, Комитета д-ра Нансена и других заграничных организаций помощи

в РСФСР, возможно предвидеть и некоторые осложнения у нас, почему прошу Вас дать мне указание и вообще определить линию поведения Представительства в основных принципиальных вопросах, касающихся взаимоотношения с заграничными организациями помощи Закавказья.

Представитель Заксовнаркома при Заграничных Организациях Помощи Закавказью Н. Тер-Газарян

ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 30, քք. 98-105.

N 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԺՇԿԱՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԺՈՂՎՈՄԻՏՈՐՀԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ս. ԱԲՈՎՅԱՆԻՆ՝ ՄԻՋՆՈՐԳԵԼՈՒ
ԱՆԳԼՎՈՄԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ
ՀԱՄԱՐ

4 հունիսի 1923 թ.
Երևան

Կարմիր Խաչը ուղարկում է Էջմիածնի շրջան ամսույն 10-ին մալարիային երկու խմբեր, որոնք բժշկական օգնություն են հասցնելու մալարիայից տառապող հիվանդներին:

Ի նկատի ունենալով, որ վերոհիշյալ շրջանի ավերման պատճառով այնտեղ չկան համապատասխան շենքեր այդ խմբերի բնակության համար, խնդրում են Ձեր միջնորդությունը ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ առաջ՝ հատկացնելու մեզ 2 բժիշկների և 8 բուժակների: Ժամանակավորպես օգտվելու համար համապատասխան թվով վրաններ: Վրանները կվերադարձվեն հոկտեմբերի սկզբին:

Հ.Կ.Խ. բժշկա-սանիտարական բաժնի վարիչ
Գործերի վարիչ

ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 158: Մերենագիր:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀՄՆՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՍ Ս. ԱԲՈՎՅԱՆԻՆ ՎՐԱՆՆԵՐԻ
ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

11 հունիսի 1923 թ.
Երևան

Միրելի պրն. Աբովյան

Պարզվում է՝ հեռագիրը (վրանների վերաբերյալ), որը ես կարգադրել էի Ձեզ ուղարկել Ղամարլուից, թյուրիմացության արդյունքում չի ուղարկվել: Ես շատ ցավում եմ և ներողություն եմ խնդրում, որ խստառամս չեմ կատարել:

1. Այդուհանդերձ՝ 2 վրան Դուք անմիջապես կատանաք: Եթե կարիք լինի Կարմիր Խաչի համար, խնդրում եմ ինձ տեղեկացնել:

2. Տղաները, որոնք բաց էին թողնվել որբանոցից, և որոնց մասին մի անգամ Ձեզ հետ խոսել եմ, այն տղաներն են, որոնք վերցվել էին գյուղերից միայն ծնունդի համար և տեղեկացված էին, որ կմնան որբանոցում միայն այն ժամկետում, որի համար ընդունվել են:

3. Ուրախ եմ տեղեկացնել Ձեզ, որ ես ստացել եմ Բաթումից հեռագիրը, որը կարգադրում է բաց թողնել ստացված կաշվեղենի 1-ին խմբաքանակը:

Մնամ Ձերդ անկեղծ
[Հարքորտ]
Տնօրեն

*ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 141: Բնագիր: Մեքենագիր:
Թարգմանություն անգլերենից:*

ԱՆԳԼԿՈՍԻ ԼԻԱԶՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՀՄՆՀ ԺՈՂԿՈՄՆՈՐՀԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14 հունիսի 1923 թ.
Երևան

Միրելի մր. Աբովյան

Շատ ուրախ եմ, որ ուշադրություն հրավիրեցիք հետևյալ պահանջների վրա. 1) Թիֆլիսի երկաթուղային վարչության և 2) Երևանի ջրի և լույսի բաժանմունքների վերաբերմունքը միսիայիս հանդեպ: Մրանք որոշ խնդիրներ էին, որ իր ժամանակին կարգադրված էին մր. Բաքսթոնի և Հայաստանի կոմիսարների միջև, իբրև եհմք մեր գործի ընդարձակման:

Ռուսաստանում կառավարության կողմից միսիայիս՝ Բաթումից մթերքների ձրի փոխադրության և նույնպես մեր հաստատություններին ջրի և լույսի հնարավորություն պետք է տրվեր:

Ուստի սրանով պատիվ ունեմ հայտնել Ձեզ, որ վերոհիշյալ խնդիրները կառավարությանն են վերաբերվում, և որի մասին կոմիտես չի հետաքրքրվում:

Տեր Ղազարյանը պետք է իմացած լիներ այս բոլորը այն օրից, երբ սա տված է կրեդիտ, և որ մենք վճարած ենք ապրանքների արժեքը, ինչ որ մուծված է երկրումս:

Կարծում եմ՝ երկաթուղային վարչությունը հաշված է 4000 ռուբլի, որը գրքույկի ուշացման պատճառով կրեդիտից առնված է. թեև խստացված էր իր ժամանակին ուղարկել Ղամարլուի համար:

Գտա, որ Ժողովմների խորհրդի ս/թ նոյեմբերի 6-ի N 7618 գրության համաձայն՝ որոշում է կայացվել մեր որբանոցների լուսավորության ձրի տրամադրման մասին:

Մեր փաստաթղթերին մայելով՝ Անդրկովկասյան երկաթուղային վարչությունից ստացված որևէ գրություն չգտանք:

Անգլիական կոմիտեի լիազոր՝ Հարքորտ

*ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 31, ք. 104 և շրջ.: Չեռագիր: Թարգմանություն
անգլերենից:*

N 27

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՄԱՍԻՆ**

27 հունիսի 1923 թ.
Երևան

Մույնով հավաստում եմ, որ պարոն Գ. Ռ. Ռիմսկի-Կորսակովը 1922 թ. մայիսից մինչև օրս, երբ աշխատանքը կասեցվել է, եղել է Բրիտանական օգնության կոմիտեի կառավարիչը Ղամարլուում ինչպես Միջագետքի որբերի օգնության, այնպես էլ մանկական սննդակայանների գծով: Նա իրականացրել է իր պարտականությունները բարեխղճորեն և լավ. լիարժեք բավարարելով Առաքելությանը՝ դրսևորել է իրապես սրտացավ վերաբերմունք փախստականների կարիքների նկատմամբ և միշտ ձգտել է պահպանել և հաստատել լավ հարաբերությունները Առաքելության և տեղական կառավարման մարմինների միջև:

[Հարբորտ]
Տնօրեն

*ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, թ. 127: Բնագիր: Մեքենագիր:
Թարգմանություն անգլերենից:*

N 28

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԵՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍՍԱՏ Ս. ԱԲՈՎՅԱՆԻՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

11 հուլիսի 1923 թ.
Երևան

Միրելի պրն.

Ի պատասխան Ձեր հարցումներին՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ մեր Առաքելությանը պատկանող կաշին, որը այժմ Բաթումում է, կհասնի

մոտավորապես ապրիլի 2-րդ շաբաթվա ընթացքում: Այն իմ կողմից ձեռք է բերվել ռուս-կովկասյան ընկերության միջոցով, երբ Կոստանդնուպոլսում էի, և ուղարկվել է իմ պահանջով: Այս գործարքի հետ կապված թղթաբանությունը (վճարի կարգ և այլն) արվել է Լոնդոնում, և որպես մեր ներկայացուցիչ՝ հանդես է եկել ռուս-կովկասյան ընկերությունը: Ես չգիտեմ, թե Լոնդոնից ում անունով է ուղարկվել ապրանքագրի բնօրինակը, բայց հավանական է, որ ռուս-կովկասյան ընկերության:

Մյուս ապրանքները՝ շաքարավազը և կաշին, գնվում է Լոնդոնում և Կոստանդնուպոլսում ռուս-կովկասյան ընկերության կողմից: Դրանք կուղարկվեն բեռների հաշիվների հետ, որոնք կազմվել են Բրիտանական Օգնության Առաքելության անունով:

Մնամ Ձերդ անկեղծ
[Հարբորտ]
Տնօրեն

*ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, թ. 124: Բնագիր: Մեքենագիր:
Թարգմանություն անգլերենից:*

N 29

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆ ՀԱՐՔՈՐՏԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԵՀ ԺՈՂԿՈՍԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝
ԱՊՐԱՆՔՆԵՐ ՆԵՐՍՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ԽՆԴԻՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

13 հուլիսի 1923 թ.
Երևան

Հարգելի Տեր

Լոնդոնից ստացել եմ հետևյալ հեռագիրը. «Երևանի կոմիտեի տնօրեն մր. Հարբորտ, Բրիտանական օգնության միասիան թելադրում է Ձեզ դուրս գալ վերջնականապես՝ նվիրելով Երևանի կառավարությանը բոլոր մթերքները և ինվենտարը»:

Պիտի նկատեք, որ սույն հեռագրի բովանդակությունը թույլատրում է ինձ շարունակելու իմ գործը, եթե գոյություն ունեցող հանգամանքները թույլ տան. դա պահանջում է անմիջական որոշում: Ես վճռել եմ երկու օր ևս սպասել, այն է՝ մինչև հուլիսի 15-ը՝ նախքան կոմիտեի հեռագրելն այն մասին, որ կարգադրությունը կատարված է: Հուսով եմ, որ դրանից առաջ ձեռք կբերվի մի բավարար արդյունք. ապահովել մեր միասիայի կարիքների համար Բաթումով անարգել ապրանքների ստացման թույլտվություն:

Այն դեպքում, եթե բավարար աղյուսը չապահովվի, ապա ես չափազանց մեծ ցավով պիտի հայտնեմ, որ միասիայի գործունեությունը պիտի դադարի սույն թ-ի հուլիսի 31-ին, երբ պատրաստ կլինեն վերոհիշյալ հեռագրում պարունակված հրահանգի համաձայն Լուսժողկոմին (որպես մանկատների պատասխանատու կոմիսարիատի) հանձնելու բոլոր մթերքները և ինվենտարը:

Մնամ Ձերդ անկեղծ՝ Հարքորս

ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 33, թ. 120: Ձեռագիր: Պատճեն:

N 30

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆ ՀԱՐՔՈՐՏԻ
ՆԱՍԱԿԸ ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍՄՍ Ս. ԱՐՈՎՅԱՆԻՆ
ՈՐԲԱՆՈՅԻ ԵՐԿՈՒ ՏՂԱՆԵՐԻՆ ԱՆԳԼԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

16 հուլիսի 1923 թ.
Երևան

Ներքևում նշված երկու որբ տղաները, որոնք ապրում էին մեր խնամքի տակ, Ալվերդի N 9 հասցեյով, մեր 2-րդ որբանոցում, տեղափոխվում են Անգլիայում մեր կոմիտեի բարեկամների կողմից՝ նրանց Անգլիայում խնամելու նպատակով:

1. Պերճ Դարակջյան՝ 16 տարեկան
2. Գևորգ Մկրտիչյան՝ 16 տարեկան

Քանի որ տղաներին Անգլիա մտնելու թույլտվություն է շնորհված, ես կոմիտեի կողմից հրահանգված եմ Ձեզ խնդրելու այդ տղաներին տալ անձաթուղթ, որպեսզի իմ մեկնելուց նրանց ինձ հետ տանեն: Շատ շնորհակալ կլինեմ, եթե հնարավորինս շուտ նրանց համար հարկ եղած քղթերը տալու կարգադրություն անեք:

Մնամ Ձերդ անկեղծ՝
Հարքորս

ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 33, թ. 105: Ձեռագիր: Թարգմանություն
անգլերենից:

N 31

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆ ՀԱՐՔՈՐՏԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՍՄԵՆՈՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

18 հուլիսի 1923 թ.
Երևան

Հարգելի Տեր.

Թույլ տվեք Ձեզ հաղորդել, որ մր. Աբովյանի միջոցով ստացաձու տեղեկության հիման վրա, որ Բաթումում միասիայիս պատկանող կաշիները բաց է թողնված, և կառավարության անունից արած խոստումը, որ Պոլսում գտնված մյուս իրերի վերաբերյալ նույնպես թույլատվություն պիտի շնորհվի, ես շուտով ուղարկեցի հետևյալ հեռագիրը:

Կառավարությունը ստացել է թույլտվություն կաշվի համար և երաշխավորում է մյուս իրերի վերաբերյալ: Նրանք ստիպողաբար խնդրում են գործը շարունակել, հանուն երեխաների սիրո՝ հանձնարարում եմ. Նորքորտին անմիջապես ուղարկեք. Հարքորս:

Ի պատասխան դրան՝ այսօր առավոտ ստացա հետևյալը:

«Կոմիտեն որոշում է. Նորքորտը⁵³ կը մեկնի հուլիսի վերջին...»:

⁵³ Նորքորտ Դ. Ս., Անդրկովկասում, հետագայում Հայաստանում Անգլիական օգնության կոմիտեի տնօրեն (1923-1925):

Թույլ տվեք Ձեզ նորից հիշեցնելու Պոլսում եղած մեր իրերի մասին, այսինքն՝ 1. Հինգ տոննա շաքարավազ, 2. Վեց հազ. կապոց [Ձեթ], 3. Երկու հարյուր ֆ. կոշիկի երեսի կաշի: Ես խնդրում եմ Ձեզ ձեռնարկել շտապ միջոցներ՝ այդ ապրանքի համար թույլտվություն ուղարկելու, որոնք մեր երեխաների համար սաստիկ անհրաժեշտ են:

Պիտի խնդրեմ նաև, որ Պոլիս հրահանգ ուղարկելիս ինձ տեղեկություն տրամադրվի, որպեսզի ես հրահանգեմ մեր գործակալին՝ այնտեղ դիմելու, ստանալու և ուղարկելու:

Մնամ Ձերդ անկեղծ՝ Հարքորտ

ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 101: Պատճեն: Թարգմանություն անգլերենից:

N 32

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆ ՀԱՐՔՈՐՏԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԵՀ ԺՈՂԿՈՍԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24 հուլիսի 1923 թ.
Երևան

Հարգելի Տեր

Մր. Աբովյանի միջոցով տեղեկացել եմ Պոլսում թուրքական իշխանության գործողության վերաբերմամբ: Մի կողմից ես խոստանում եմ ամեն ջանք գործադրել այդ ապրանքներն ապահովելու համար: Մակայն թույլ տվեք Ձեզ հիշեցնելու, որ Պոլսում թուրքիայի արարքը ոչ մի կապ չունի Թիֆլիսի վնեշտորգի և Պոլսի Ջակվնեշտորգի ներկայացուցչի գործողությունների հետ:

Կ. Պոլսում գտնված միսսիայիս պատկանող հինգ տոննա շաքարը, վեց հազ. կապոց [Ձեթ] և երկու հազար ֆունտ կոշիկի երեսի կաշիների ստանալու թույլտվություն տալը Պոլսի Ջակվնեշտորգի ներկայացուցչի կողմից մերժվել է հիշված առաջին և երկրորդ ապրանքի համար, իսկ վերջին ապրանքի թույլտվությունը մերժել է Թիֆլիսի վնեշ-

տորգը, և եթե այդ արգելքները չլինեին պատճառը և չնայելով, որ թե՛ Երևանի կառավարության կողմից և թե՛ Թիֆլիսում ներկայացուցիչ Տեր-Ղազարյանի կողմից խոստումներ են եղել այս տարվա մարտից ի վեր, գործի համար անհրաժեշտ սույն ապրանքները վաղուց ստացած կլինեինք:

Երբ մր. Աբովյանը տեղեկություն բերեց ինձ Բաթումի կաշիների ազատման մասին, նա ևս երաշխավորեց, որ Երևանի կառավարությունը Թիֆլիսի վնեշտորգից հարկ եղած թույլտվություն պիտի ստանա, և ես նույնը հաղորդեցի Լոնդոնի մեր կոմիտեին:

Մինչև այժմ ես այդ թույլտվությունը չեմ ստացել:

Ուստի խնդրում եմ որքան հնարավոր է շուտ կատարեք կառավարության անունից տրված սույն խոստումը և պաշտոնական հաղորդակցությամբ ինձ տեղեկացրեք այդ թույլտվությունը տրամադրելու մասին, որպեսզի ես կարողանամ Պոլսի Անգլիական ներկայացուցչի միջոցով թուրք իշխանության հարուցաց խոչընդոտները հարթել:

Մնամ Ձերդ անկեղծ՝ Հարքորտ

ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 97: Պատճեն: Թարգմանություն անգլերենից:

N 33

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆ ՀԱՐՔՈՐՏԻ
ՆԱՍԱԿԸ ՀՍԵՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍՄԱՏ Ս. ԱՐՈՎՅԱՆԻՆ ԿՈՄԻՏԵԻ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԹՎԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4 օգոստոսի 1923 թ.
Երևան

Ձեր բանավոր խնդրանքին ի պատասխան՝ ներկայացնում եմ տեղեկագիր մեր տրամադրության տակ գտնված շենքերի տարածքի և երեխաների թվի վերաբերմամբ:

1-ին Որբանոց. Թարխանյան փող N 39 տուն

Գլխավոր շենքի տարածքը 5160 խոր. արշին
 հարակից մասերը 641 խոր. արշին
 ընդամենը 5801 խոր. արշին
 շրջաբակը 595 քառ. արշին
 այգին 4305 քառ. արշին
 երեխաների թիվը 107, այդ թվում 88 աղջիկ, 19 տղա:

2-րդ Որբանոց. Տոթթորակի N 11 տուն

Գլխավոր շենքի տարածքը 9047 խոր. արշին
 հարակից մասերը 3303 խոր. արշին
 ընդամենը 12350 խոր. արշին
 երեխաների թիվը 83 տղաներ:

3-րդ Որբանոց. Ս. Սարգիս եկեղեցու գավթում նախկին քեմական դպրոցի շենքը

Գլխավոր շենքի տարածքը 15730 խոր. արշին
 երեխաների թիվը 200, այդ թվում 123 աղջիկ, 77 տղա:

4-րդ Որբանոց. Տոթթորակի N 33 տուն

Գլխավոր շենքի տարածքը 3075 խոր. արշին
 այգիները 6324 քառ. արշին
 երեխաների թիվը 115, այդ թվում 40 աղջիկ, 75 տղա:

Որբանոցներում գտնվող երեխաների թիվը

Որբանոցներ	Տղաներ	Աղջիկներ	Ընդամենը
I	19	88	107
II	83	-	83
III	77	123	200
IV	75	40	115
Ընդամենը	254	251	505

Գրասենյակ. Բեյրության փող. N 90 տուն, տարածքը՝ 7050 խոր. արշին:

Կենտրոնական պահեստ. Զարվանսարա փողոցի ներքևի մասում, պահեստ Ազիզովի, տարածքը՝ 6000 խոր. արշին:

Փոստ. Բեյրության N 1 տուն, տարածքը՝ 160 խոր. արշին:

Առաջին այգին. Մալխասկի փողոցի վերջում, տարածքը՝ 1 դիսիատին:

Երկրորդ այգին. Կոյարանի մոտ, տարածքը՝ 3 դիսիատին:

Ընդամենը՝ 4 դիսիատին:

Անգլիական օգնության կոմիտե
 Հարքորտ

ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, քք. 88-89: Չեռագիր: Պատճեն:

N 34

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆ
 Գ. Ս. ՆՈՐԹՔՈՐՏԻ ՆԱՍԱԿԸ ՀՄԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԼԻԱԶՈՐ
 ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ Վ. ԹՈԹՈՎԵՆՑԻՆ ԿՈՄԻՏԵԻ
 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7 սեպտեմբերի 1923 թ.
 Երևան

Երեկվա իմ՝ Չեզ հետ ունեցած խոսակցությանս առթիվ խնդրում եմ Չեզ տալ հետևյալ ինֆորմացիան.

1. Հետևյալ ապրանքները, որ մենք գնել ենք Պոլսում, հասնելու են Բաթում անմիջականորեն, եթե մինչև հիմա չեն հասել.

Շաքար՝ 5 տոնն

Չեթ՝ 6 հակ

Երեսի կաշի՝ 2000 ուտք:

Ես շատ երախտապարտ պիտի լինեմ, եթե Դուք բարի լինեք հա-
ղորդակցելու Բաթումի հայկական ներկայացուցչի հետ և տեղեկանա-
լու, թե այդ ապրանքները մինչև հիմա հասած են թե ոչ, քանի որ մենք
Բաթումում ոչ ոք չունենք հիմա, որ հոգա մեր շահերը:

2. Մեր խնամքի տակ գտնված որբերի քիվն է 485, քայց դրանցից
85-ը պատկանում են ավելի բարձր դասարանների, քան 4-րդ դասարա-
նը, ինչպես ես Ձեզ երեկ ասացի, ես ցանկանում եմ տեղավորել այս 85
որբերը կամ կառավարական դպրոցներում կամ Ամերիկյան դպրոցում
և քանալ մի դպրոց 400-ի համար, որոնք 4-րդ բաժանմունքից վար են:
Այս 400-ից 35-ը պիտի լինի մանկապարտեզում, իսկ մնացածները
հետևյալներն են. 210-ը՝ 1-ին դասարան, 90-ը՝ 2-րդ դասարան, 45-ը՝
3-րդ դասարան, 20-ը՝ 4-րդ դասարան: Ընդհանուր գումարը՝ 365:

Ես շատ երախտապարտ կլինեի, եթե Լուսժողկոմատը ինձ թույլ
տար ստանալու թերթեր, կապի գրքեր, մատիտներ և այլն՝ այն համե-
մատությամբ, որ կառավարության դպրոցի երեխաները ստանում են:

3. Փոռի նկատմամբ հայտնում են հետևյալը.

Այդ շենքը, որ մենք ստացանք, ազգայնացրած է: Նախկին շենքը
հիմա ստացել է մի դոկումենտ, որով շենքը իրեն է վերադարձվում, հե-
տևաբար նա մեզանից պահանջում է վարձ: Ես շատ երախտապարտ
կլինեի, որ Դուք կարգադրեիք սա տրվեր մեզ, կամ մեզ մի ուրիշ շենք
տայիք փոռի համար կամ կարգադրեիք այս պահանջը:

4. Երեկ մեր այն պարտեզից, որ մեզ տրամադրված է Լուսժողկո-
մատի կողմից, որը գտնվում է քաղաքից մի քիչ դուրս երկաթուղի կայա-
րանի ճանապարհի վրա, պտուղ բերելիս թյուրք հավաքողները պա-
հանջած են մի գումար, եթե ոչ, չեն թողնում, որ առաջ գնան: Բարի կլի-
նեք արդյոք ձեռք բերել մեզ համար մի դոկումենտ, որ կարելի լինի
ցույց տալ թյուրք հավաքողին պարտեզի մեր արտադրությունները քա-
ղաք բերելիս:

Նորքբորտ

ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 69: Մեքենագիր: Պատճեն:

N 35

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՄԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
Ս. ԱԲՈՎՅԱՆԻՆ ՈՐԲԱՆՈՑԻ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ
ԱՐՀԵՍՏՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 սեպտեմբերի 1923 թ.
Երևան

Անցյալ տարի Կոմիտեի որբանոցի աղջիկներից 32 հոգի հաճա-
խում էին կարուձևի և ասեղնագործության պետական արհեստանոց,
իսկ 17 հոգի ևս՝ զամբյուղագործության արհեստանոց:

Շատ շնորհակալ կլինեի, եթե օժանդակեիք նույն երեխաներին այս
տարի ևս առանց վճարի սովորելու վերոհիշյալ արհեստանոցներում:

Անգլիական օգնության կոմիտեի՝ Նորքբորտ

ՀԱՍ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 50: Ձեռագիր: Թարգմանություն
բնագրից:

N 36

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՐԻՉ ՆՈՐԹՔՈՐՏԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՄԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏ Ս. ԱԲՈՎՅԱՆԻՆ
ԿՈՄԻՏԵԻՆ ՏՐՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 սեպտեմբերի 1923 թ.
Երևան

Ներփակ ուղարկում եմ Ձեզ Երևանի քաղաքովանի կոմունալ տն-
տեսության մի գրություն, որը խնդրում է մտցնել իրենց դրամարկո
փոռում գործածած ջրի արժեքը:

Բարի եղեք մեր կողմից հայտնել նրանց, որ Կոմիտեն արտունված
է ջրի, լույսի և նման տուրքերից ազատ լինել:

Այս խնդիրը խնդրեմ կարգադրեցեք:
Պիտի ավելացնեմ, որ այս փուտը երկու շաբաթից փակելու ենք,
որովհետև ս. Սարգսում արդեն նախաձեռնած ենք թոմիր կառուցել:

Անգլիական օգնության կոմիտե՝ Դ.Ս. Նորթքոլտ

ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 49: Ձեռագիր:

N 37

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՆՈՐԹՔՈՐՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԵՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍԱՏ
ՈՐԲԱՆՈՑԻ ՈՐՈՇ ՄԱՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՊՐՈՑՈՒՄ
ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

3 հոկտեմբերի 1923 թ.
Երևան

Հարգելի պարոն

Ձեզ հետ ունեցած գրույցի հետ կապված մի քանի օր առաջ ես կից
ուղարկեցի 18 տղաների և աղջիկների անունները, այդ թվում՝ մեր որբե-
րի, որոնք պատկանում են 5-րդ դասարանից բարձր տարիքի, և որոնց
մենք ի վիճակի չենք տեղավորել ս. Սարգսի մեր դպրոցում:

Ուրախ կլինեի, եթե Դուք կարողանաք տեղավորել նրանց նոր
պետական տեխնիկական դպրոցում, որի մասին նշում էիք:

1	Եղիշե Օհաննեսյան	տղա	8-րդ դասարան
2	Ռուսետ Օհաննեսյան	տղա	8-րդ դասարան
3	Հայրիկ Կուրկչյան	տղա	8-րդ դասարան
4	Վահրամ Ֆերդջուլյան	տղա	8-րդ դասարան
5	Աղավարտ Մուրադյան	տղա	7-րդ դասարան
6	Հոսեպ Գրիգորյան	տղա	7-րդ դասարան
7	Միլիտոս Կարապետյան	տղա	7-րդ դասարան
8	Անուշավան Հարությունյան	տղա	6-րդ դասարան

9	Դսերոն Սոմոնկրանյան	տղա	6-րդ դասարան
10	Իշխան Արսենյան	տղա	6-րդ դասարան
11	Վարդան Ավետիսյան	տղա	6-րդ դասարան
12	Երանուհի Հարությունյան	աղջիկ	7-րդ դասարան
13	Մաիրանուշ Բարոնիկյան	աղջիկ	7-րդ դասարան
14	Սիրանուշ Գասպարյան	աղջիկ	7-րդ դասարան
15	Ալմաստ Այվազյան	աղջիկ	7-րդ դասարան
16	Մարիամ Սկրոյան	աղջիկ	6-րդ դասարան
17	Սաթենիկ Սկրոյան	աղջիկ	6-րդ դասարան
18	Մարգար Իսրայելյան	տղա	7-րդ դասարան

Մնամ Ձերդ անկեղծ՝ Դ.Ս. Նորթքոլտ
Անգլիական օգնության կոմիտե

ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 33, ք. 31: Բնագիր: Մեքենագիր:
Թարգմանություն անգլերենից:

N 38

**ԱՆԳԼԿՈՍԻ՝ ՄԱՍՈՒԼԻՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ
ԱՆԳԼԿՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

19 նոյեմբերի 1923 թ.

**ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԳՈՐԾԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ**

Armenian Refuges (Lord Mayor's) Fund-ի Վարչությունը մամուլին
հաղորդած է հետևյալը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի և բովանդակ Ռուսիոյ մեջ կացությունը օր ըստ օրե
կրարվոքի» կրստ Հ. Ռիլամ Հարքորտը, որ վերջերս վերադարձաւ Անգլիա
երեք ու կես տարի անցկացնելով Երևանի մեջ, իբրև տնօրեն Հայ Գաղ-

քականներու Նպաստամատույց գործի (Լորդ Մեյորս ֆոնդ), որուն կետրոնատեղին է 96, Վիքթորիա Սթրիթ Լոնդոն: Այս տարի, Անդրկովկասի բոլոր մասերու մեջ, ի բացառյալ մի քանի շրջանների, որոնք երաշտեն և մարախէ վնասված են, հունձքը շատ լավ է: Երևանը, կ'ըստ Մր. Հարքորտը, այժմ բոլորովին տարբեր է այն քաղաքէն, որ ճանչած է 1920-ին: Տուները նորոգված են, փողոցները սալակված են և ծառեր տնկված: Գաղթականները աստիճանաբար ինքնաբավ կը դառնան և կը նույնանան բնիկ ժողովուրդի հետ: Փողոցներուն մեջ մուրացիկներու թիվը նվազ է, քան անցյալին մեջ: Ոռոգման աշխատանքները, որոնց նպատակն է քաջալերել բամբակի մշակությունը, մեծ հաջողությամբ առաջ կը տարվին: 1922-ին բամբակ մշակված հողերու տարածությունը 500 տիսիաթին էր, մինչ այս տարի շուրջ 10 հազար տիսիաթին է, և կստացվի որ առաջիկա տարի այս թիվը պիտի բարձրանա 30-40 հազարի:

Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, թեև անդրկովկասյան դաշնակցությամբ իրարու միացած են, սակայն ազատ են ոստիկանական, կրթական, մշակութային և հանրային առողջապահական գործերուն մեջ. տեղական լեզուները ավելի կը քաջալերուին, քան կը ջնջուին: Անդրկովկասյան դաշնակցությունը հասարակ դրամ մը ունի, որը տարբեր է ռուսականեն, բայց մտադրություն կա ռուսական դրամը գործածել առաջիկա հունվարից սկսած: Մինչև այդ մտադրությունը իրագործվի, ռուսական չեփոնէցը (ռսկի ռուբլի) օրէ օր ավելի կը գործածվի առևտրական գործառնության մեջ: Մաքսերը, երկաթուղիները, զինվորական և արտաքին գործերը կախում ունեն Մոսկվայի կետրոնական կառավարութենէն: Անցողակի ըսենք, թէ ռուս ընկերավարական Սովետական Դաշնակցական Հանրապետությունը այժմ փոխված է Սովետական Ընկերավարական Հանրապետությանց միության, փոփոխություն, որ Արևմտյան Եվրոպայի մեջ նշմարված ըլլալ չքողին: Ռուսական մաքսային բարձր սակագների մուտքը, մնացած օտար առևտուրի կեսը կառավարական թղթերու կամ սերտիքարտներու մենաշնորհ կդառնա, տնտեսական լուրջ խնդրի առջև դնելով անդրկովկասյան ժողովուրդներին:

Օտար ապրանքներու Պոլսոյ և Պարսմի ճամբով ներմուծումը որևէ շահ չի բողմի, և ներկայիս Մոսկվայի ճամբով միայն կը կատարվի գրեթե բովանդակ վաճառականությունը: Բայց սակագներու բարձրացումը ահագին բարձրացում առաջ բերած է ճարտարարվեստական վաճառքներու զնին վրա, մինչ այդ զինը շատ վար էր: Եթե այս վիճակին դարման չտրվի, գյուղացին պիտի ընէ ինչ-որ կը ընէր հեղափոխության առաջին տարիներին. միայն այնքան ցորեն պիտի մշակէ, որքան պետք է իր սեփական պետքերուն, որովհետև պիտի չկրնայ պատրաստ ապրանքներ գնել՝ նույնիսկ իրեն պետք եղածեն ավելի ցորեն մշակելով: Վտանգը կանխատեսված է, սակայն և իշխանությունները միջոցներ կը ուսումնասիրեն այն արգելելու համար:

ԼՈՐԴ ՄԵՅՈՐՍ ՖՈՆԴԻ ԳՈՐԾԸ

Լորդ Մեյորս ֆոնդի ձեռնարկած գործը, որ անհրաժեշտ է շարունակել, գուտ շինարար բնույթ ունի: Տեղական իշխանության հետ գործակցաբար ֆոնդը կազմակերպած է ազատ օգնության կայան մը և մայրերու և երիկներու կաթ բաշխող կենտրոն մը: Դժբախտաբար կաթի պակասը ստիպած է այս գործը սահմանափակել: Ֆոնդը իր կարևոր աջակցությունը բերած է կառավարության տարափոխիկ հիվանդությանց, մասնավորապես մալարիայի և բորոտության դեմ դեղեր հայթայթելով: Տոբթ. Բորոֆը, որ Անգլիոյ մեջ ստացած է իր կրթությունը, մալարիայի դեմ պայքար մը կազմակերպեց, որ ուշագրավ հաջողությամբ մը պսակվեցավ: Այս ամառ Երևանի մեջ մալարիայի բռնկումներու թիվը վերջին տարիներու թվի քառորդն էր: Լավագույն արդյունքներ ձեռք պիտի բերվի առաջիակա տարի, վասնզի կը խորիվի արգելել բրնձի մշակության հատկացված ճահճուտները և բրնձի տեղը բամբակ մշակվի: Վերջին տարվա ընթացքում Լորդ Մեյորս ֆոնդի աջակցության շնորհիվ 1500 հոգի սովից ազատվեցան: Թուրքահայաստանեն եկած մաս մը գաղթականների հաստատված էին Ալագյազ լեռան կողերուն վրա և իրենց ցանած ցորենը անբավական էր հոգալու հաջորդ ձմռան իրենց պետքերը: Մր. Հարքորտը պարեն դրկեց, չափա-հասներուն ուտելիք բաժանեց և տղոց համար սնունդի կայան մը հաս-

տատեց: Այս բարեղեպ օժանդակութեամբ գաղթականները հիմա կրնան հոգալ իրենց պետքերը:

Վերջին տասը տարիներու ընթացքում Լորդ Մեյորս Ֆոնդի՝ այս շրջաններու մեջ ունեցած գլխավոր հաջողություններից մեկը եղավ անգլիական կառավարության շնորհիվ Միջագետքեն փոխադրված 6000 հայ գաղթականների, ինչպես նաև Պարսկաստանն ժամանած 1000 հոգին խումբի մը տեղավորումը: Դժվարությունները շատ եղան ի սկզբանե, բայց գործը հաջողությամբ գլուխ հանվեցավ, ուշագրավորեն չափավոր, այսինքն մարդը՝ 6 անգլիական ոսկի 5 շիլինգ ծախսով մը: Հունիսից ի վեր այս գաղթականները նպաստ չեն ստանա, և նպաստի համար որևէ նոր դիմում ալ չեն ըրած:

Լորդ Մեյորս Ֆոնդը Երևանի մեջ չորս որբանոց կը պահե տակավին, ուր կը հոգացվին 3-ից 16 տարեկան 500 երեխաներ: Մանչերը դպրոցը ավարտելէ հետո կը հետևին արհեստագիտական դասընթացներու և արհեստ մը կը սորվին: Աղջիկները կը սորվին կար ու ձև, հյուսվածագործություն, ժանյակագործություն և ասեղնագործություն: Որբուհիներու շինած ժանյակներն և ասեղնագործություններն մեկ քանիսն վերջերս դրկվել են Մոսկվայի ցուցահանդեսը, ուր մեծ գնահատման արժանացան իրենց նրբության համար: Եթե տնտեսական պայմանները շարունակեն բարվոքել, հուսալի է տեղական իշխանությունները ի վիճակի ըլլան ստանձնելու որբանոցներու հոգատարությունը: Մինչև այդ Լորդ Մեյորս Ֆոնդը պետք է շարունակե իր գործը:

ՀԱՄ, ֆ. 430, ց. 1, գ. 492, քք. 23-27:

N 39

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԵՆԻ ՆԱՍԱԿԸ
ՀՄՆՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ս. ԱՔՈՎԵԱՆԻՆ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄԸ
ԻՐ ՆՊԱՏԱԿԻՆ ԾԱՆՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 նոյեմբերի 1923 թ.
Երևան

Հարգելի տեր.

Ներկիակ ներկայացնելով աշխատանքի պաշտպանության քարտուղարից մի գրություն՝ գոհ պիտի լինեի, որ բարի լինեք հիշեցնել նրանց, որ այս Նպաստամատույց կազմակերպության դրամը, որ կծախսվի ոռճիկներու և այլ ծախսոց համար, հատկացված է կարելի եղածի չափ աղքատություն և թշվառություն ամոքելու: Այն անձինք, որ ընտրված են կազմակերպության համար, այս դրամով միշտ սովորություն ըրած են վարձել անկարողներ և անգործներ: Գաղթականներ և ուրիշ անձնավորություններ, որոնք բացարձակապես աղքատ և գործի կարոտ այնչափ ժամանակ, որչափ մի դրամ կծախսվի: Ես պետք է պնդեմ արտոնված ըլլալ շարունակել այդպես լինելու: Բայց միևնույն ժամանակ հոժար կըլլամ գործ տալ այն անձնավորություններու, որ աշխատանքի միություն կգրկե պայմանով, որ միությունը վճարի նրանց ոռճիկները: Այն ատեն ավելի դրամ կունենամ գործածել երեխաներու պետքերու համար, որ մեր գլխավոր նպատակն է:

Մնամ հարգանք՝ Դ.Ա. Նորթրոքտ
Անգլիական օգնության կոմիտե

ՀԱՄ, ֆ. 113, ց. 38, գ. 33, քք. 9-10: Չեռագիր: Թարգմանություն
անգլերենից:

**ДОКЛАД О РАБОТЕ ПРЕДСТАВИТЕЛЬСТВА
ЗАКСОВНАРКОМА АРМЕНИИ ПРИ ЗАГРАНИЧНЫХ
ОРГАНИЗАЦИЯХ ПОМОЩИ ЗАКАВКАЗЬЮ О
ДЕЯТЕЛЬНОСТИ БРИТАНСКОЙ МИССИИ ПОМОЩИ
ДЕТЯМ В ЗАКАВКАЗЬЕ**

19 декабря 1923 г.

Тифлис

О работе Британской Миссии помощи детям Закавказья.

Британская Миссия помощи детям Закавказья работает только в пределах Армении и его помощь, по сравнению с Американским Комитетом, незначительна и подверглась постоянному сокращению с 1-го января 1923 г.

Британская Миссия помощи имеет в Эривани 4 приюта, в которых на полном пансионе содержатся 243 мальчика и 240 девочек. Всего 483 детей.

Больницы: имеется одна маленькая больница и амбулатория.

В больнице 8 кроватей. Ежедневная посещаемость амбулатории - 15

Школы: Британская Миссия содержит одну школу по программе Правительственных школ, где обучаются 513 детей, при 17 учителей, в число учащихся входят все сироты и также 30 детей сотрудников Британской Миссии.

Имеются ремесленные школы.

1) Столярная, в которой шестнадцать сирот-мальчиков обучаются ремеслу при одном инструкторе-плотнике.

2) Сапожная, где учатся двадцать четыре мальчика-сирот при одном инструкторе-сапожнике.

3) Восемьдесят четыре мальчика из приюта Британской Миссии работают как подмастерья в частных мастерских в городе Эривани.

4) Двадцать восемь девочек посещают Правительственную школу шитья.

Общая помощь:

1) С 1-го января по 1-е июля Британская Миссия выдала пайки беженцам из Мессопатамии, расположенных в Камарлинском районе.

2) С 1-го января по 1-е июля Британская Миссия содержала один питательный пункт в Эчмиадзине, где прокармливались 300 детей.

3) В настоящее время Британская миссия выдает ежемесячно 16 крайне бедным семьям сухие пайки.

Продукты помощи: Британская Миссия помощи, как для содержания своих приютов, так и для оказания помощи беженцам, почти все продукты помощи приобретает в пределах Закавказья и лишь пожертвования получает непосредственно из Англии.

За отчетный период Британской Миссией приобретено в Закавказье следующее: 2.000 пуд. муки из Батума, 2.000 пуд. муки из Госбанка РСФСР в Эривани, 18.000 пуд. муки пшеницы из Нахичевани для распределения среди Мессопатамских беженцев.

С 1-го февраля по 1-е июля:

100 пуд. сахару из Эривани,

1.500 пуд. картофеля и лука,

20.000 пуд. дров для топлива,

Мелкие покупки, как-то: школьные книги, веники, кухонные принадлежности и прочее.

Получено из Англии:

68 пудов подошвенной кожи, 4 ящика хинина.

Сельское хозяйство: В Эривани Британская Миссия имеет 2 виноградника и сады, где культивируются фрукты и овощи для сирот.

Местный и иностранный персонал:

Иностранного персонала - 1,

Местный персонал - 77,

Всем сотрудникам в общем выдается ежемесячно 245 фунт стерлингов.

Помещения: Британская Миссия занимает в Эривани 7 помещений, из коих: 4 приюта, 1 складочное помещение, 1 помещение под учреждение, 1 квартира для Генерального директора.

Представитель Заковнаркома и Совнаркома ССР Армении при
Заграничных Организациях Помощи Закавказью Н. Тер-Газарян
Секретарь

ՀԱՄ, ֆ. 113, ց. 38, գ. 32, քք. 14-16*:

N 41

ՀԱՆՃ ԺՈՂՎՈՄՆՈՐՀԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ Ս. ԱՐՈՎՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՎՈՄՆՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀ
Ս. ԼՈՒԿԱՇԻՆԻՆ ԱՆԳԼԿՈՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8 հունվարի 1924 թ.

Ուղարկում եմ Ձեզ Անգլկոմի դիրեկտոր քաղ. Նորքորտից ստացված տեղեկությունները, որ ստացա այսօր ի պատասխան իմ տված հարցերին:

Ձեզ հետաքրքրող այլ հարցերի մասին կտեղեկանամ և կպատասխանեմ:

Ինչ վերաբերում է Ամերկոմին, նրա գործունեությունը Երևանում սահմանափակվում է միմիայն տնային որբերի (թվով 883) պարենավորումով (ստանում են պարեն և հագուստ այն չափով, որքան ընկնում էր մանկատան յուրաքանչյուր որբի):

Ս. Արովյան

* Տե՛ս նաև Բանբեր Հայաստանի արխիվների, N 1(117), Երևան, 2011, էջ 73-74, փաստաթուղթ N 6:

Ճաշացուցակ
Անգլիական օգնության կոմիտեի որբանոցների 120 երեխաների
(ամիսը մեկ անգամ փոփոխելի)

Զարգացման օրեր	Մայրաքաղաք	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ	
											Մայրաքաղաքի քաղաքացիներ	Մայրաքաղաքի քաղաքացիներ
Բ. 2.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	25 20
Գ. 2.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	25 1/4 20
Դ. 2.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	30 1/4 5
Ե. 2.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	20 1/4 5
Ուր.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	20 1/4 5
Եր.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	30 1/4 5
Կիր.	Կակաո	Կակաո շաքար	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	1 6%	64 1/4

Անգլիական օգնության կոմիտեի որբանոցներում կերակրվող որբերի նորման.

1. Հաց՝ 1 ֆունտ⁵⁴ /լավաշ/, իսկ պահակներին և արհեստավորներին՝ 1 ½-ական:

2. Շաքար՝ 5 մսխալ⁵⁵:

3. Կակաո՝ 1 մսխալից մի քիչ պակաս:

4. Կարտոֆիլ խաշած՝ 1 ֆունտ, իսկ ոսպ՝ 1/2 ֆունտ:

5. Բրինձ և ձավար՝ 1/3 ֆունտ:

6. Մածուն՝ 1/2 ֆունտ:

7. Միս՝ 1/4 ֆունտ:

8. Յուղ՝ 5 ֆունտ:

9. Սոխ՝ 5 ֆունտ:

10. Լոբի խաշած՝ 1/3, ոսպ՝ 1/4 ֆունտ:

Անդրկովկասում արտասահմանեան օգնութեան կազմակերպության լիազոր ներկայացուցչին:

Ի պատասխան Ձեր խնդրած հարցերին՝ ուղարկում ենք ներփակ ցուցակը:

1. Հարց. Քանի՞ որբանոց ունեք և յուրաքանչյուրում քանի՞սն են տղա և աղջիկ:

Պատասխան. Ունենք 4 որբանոցներ:

		աղջիկ	տղա
I	որբանոց	92	36
II	որբանոց	-	126
III	որբանոց	35	31
IV	որբանոց	91	27
Ընդհամենը		218	220

2. Հարց. Քանի՞ հոգին են մինչև 14 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցողներ:

⁵⁴ Մեկ ֆունտը հավասար է 0,46 կգ:

⁵⁵ Մեկ մսխալը հավասար է 1,5 գ:

Պատասխան. 4-14 տարեկան՝ 379, իսկ վեր՝ 59-ը:

3. Հարց. Ունե՞ք արդյոք առանձին հիվանդանոց և քանի՞ մահճակարկ:

Պատասխան. 2 որբանոցում ունենք մի փոքր հիվանդանոց 8 մահճակարկով...

4. Հարց. Քանի՞ դպրոց և արհեստանոցներ /ինչ արվեստների/ ունեք, հաճախորդների թիվը:

Պատասխան. Ունենք մի դպրոց՝ 491 որբ-որբուհիներով, ունինք հյուսնոց՝ 8, իսկ կոշակարնոց՝ 25, սակայն այդ բաժինը ժամանակավորապես գոցված է:

5. Հարց. Քանի՞ հոգի են պահվում դպրոցում, արհեստանոցներում, մանկատներում և պահեստներում:

Պատասխան.

I. Դպրոցում՝ 17

II. Արհեստանոցներում՝ 3

III. Մանկատներում՝ 18

IV. Պահեստներում՝ 2

V. Հիվանդանոցում՝ 2

VI. Պահակ և շոֆեր՝ 12

VII. Փոռում և այգիում՝ 8

6. Հարց. Քանի՞ հոգի են տեղացի և քանիսը օտարերկրացի /անգլիացի, ամերիկացի և այլն/:

Պատասխան. Տեղացի պաշտոնյաներ՝ 62-ը, օտարերկրացի 1-ը /անգլիացի/:

7. Հարց. Պաշտոնյաների վարձատրությունը ի՞նչ նորմայով է տրվում, արդյոք առաջնորդվում ե՞ք Աշխատանքի ժողովրդական կոմիտեի սարխատի և Արհմիության հրահանգներով:

Պատասխան. Վճարները սթերիլիզով ենք վճարում. չենք առաջնորդվում ո՛չ աշխատանքի և ո՛չ Արհմիության հրահանգներով:

8. Հարց. Բացի որբերի կարիքից՝ արդյոք որոշ օգնություն /նպաստ, հագուստ և այլն/ հասցնո՞ւմ եք դոսի ազգաբնակչությանը, թե ոչ, եթե այո, ի՞նչ օգնություն և ի՞նչ չափով:

Պատասխան. Ունենք 44 տնային որբեր I կարգի, որ մեր որբանոցներից գոյացած են ինքնին ապրելու որբանոցում տեղ չունենալու հա-

մար և անոնք ստանում են ամեն ինչ. մահճակալ, մաքրաս, սավան, աղեալներ և ողջ շորերը կոշիկ, դպրոց պարտավորել է ասոնց, իսկ ասոր հետ նաև ունեք 23 II կարգի որբեր, որ ստանում են միայն մթերք այն նորմայով, ինչ-որ I կարգի որբերը. գործինակ՝ այուր ցորենի, ամսական 30 ֆ.: Այս մթերքը I և II կարգի տնային որբերին կը տրվի ամեն ամսի 1-ին:

Բրինձ	3 ֆունտ
Լոբի	5 ֆունտ
Յուղ	1 ֆունտ
Ցորեն	3 ֆունտ
Աղ	2 մսխալ
Օճառ	1 ֆունտ
Շաքար	1½ մսխալ
Կակաո	30 մսխալ
Սոխ	4 ֆունտ
Կարտոֆիլ	12 ֆունտ

9. Հարց. Մանկատների պահպանության համար ի՞նչ նյութեր եք այստեղից ձեռք բերում և ի՞նչ դրսից:

Պատասխան. Արտասահմանից ստանում ենք՝ շաքար, կաշի և շոբեղեն, իսկ միս և այլ բաներ գնում ենք այստեղից:

10. Հարց. Ներկայումս ի՞նչ շենքեր ունեք Ձեր տրամադրության տակ: Պատասխան.

I	որբանոց	Թարխանյան փողոց
II	որբանոց	Տոբտոբսկի փողոց
III	որբանոց	Ս. Սարգիս փողոց
IV	որբանոց	Տոբտոբսկի փողոց

Գրասենեակ [Բեյբության փող.]:

Պահեստ (Ազիզովի շենք Կազանցնոց):

Մր. Նորթբորտի բնակարանը (Յարսկի 104, Հախնազարյանի շենքում 2 սենեակ):

11. Հարց. Քանի՞ շենքում էլեքտրական լուսավորություն ունեք և քանի՞ կետեր:

Պատասխան.

I	որբանոց	15, որից 12 վառվում է
II	որբանոց	32, բայց վառվում են միայն 14-ը
III	որբանոց	11 վառվում են
IV	որբանոց	18 վառվում են
	գրասենեակ	2 վառվում են
	տուն	3 վառվում են

12. Հարց. Ի՞նչ միջոցներ ունեք տրանսպորտի և երթևեկության համար: Պատասխան. Մի սայլ ջուր կրելու և մի ավտոմոբիլ բեռնակիր:

Դ.Ս. Նորթբորտ

Անգլիական օգնության կոմիտե

ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 42, քք. 9-17: Չեռագիր: Պատճեն:

N 42

ԱՆԳԼԿՈՍԻ ՏՆՕՐԵՆ ՆՈՐԹ-ԶՈՐՏԻ ՆԱՄԱԿԸ ՀՄԽՀ
ԺՈՂԿՈՄՆՈՐՀԻ ԶԱՐՏՈՒՂԱՐ Գ. ՊԱՐԶՅԱՆԻՆ՝⁵⁶ ՈՐԲԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14 հունվարի 1924 թ.

Երևան

Այսօր առավոտյան Ձեզ հետ ունեցած խոսակցության վերաբերմամբ գրում եմ հետևյալը, որ քաղվածքն է մի նամակի, որ ես վերջերս ստացել եմ Կոմիտեիս Լուդոնի քարտուղարից:

Մենք իմացանք, որ Ձեր որբերու թիվը տակավին 470 է, և ըմբռնում էինք, որ Դուք դժվարությամբ պիտի կարողանաք կրճատել զանոնք ձեր մտքում ունենաք այն հեռանկարը, որ Կոմիտեն անկարող պիտի լինի՝ առանց հիմնական կրճատման, ստանձնել պաշտպանությունը

⁵⁶ Պարզյան Գագիկ, կուսակցական, պետական աշխատող: ՀՄԽՀ ժողկոմխորհի քարտուղար, տնտեսական խորհրդի գործերի կառավարիչ, օտար նպաստամատույց կոմիտեներում ՀՄԽՀ ներկայացուցիչ:

